

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

Բացառիկ թիւ Ա. — 35

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ընթերցողներուն . — Քննադատութիւնը . Մ. Սուրեան . — Կնոջ ազդեցութիւնը (գրական տեսակէտով) Մ. Թապագեան . — Ոգեհարցութիւն Մ. Ս. — Ասորա-եփրայական զրոյց մը՝ Զրհեղեղի մասին Բ. Գ. Իզմիշեան . — Արաշագործութիւն կնոջ, Մարի . — Աշխատութեան երգ, Աշոտ Յ. Պազպազեան . — Կրակն իբր կենսասուտնայր, Սուրեն Սիրաֆ . — Ամերիկեան Գրականութիւն . Ուրուական Փետացուն . (Վիպակ ասպետական դարու կեանքէն) — Թարգմ. Բ. — Ամուսնութիւնը ... ռեփամով . Բանագոյ Լոռութիւնեան . — Մարդ յանձնարարելու եղանակ մը :

ԳԻՆ 40 | ՓԱՐԱ



ՏՊԱԳՐԻՉ — ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՆՇԱՆԿ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՀԱՆՐԱՔԻՏԱԿ

ՀԱՆՐԱՔԻՏ هازا كيداق HANRAKIDAG

ՀԱՐԱԹԱԿԱՆ مجموعه علوم JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

2. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || Ա. ԹԻԻ 35 || 30 ՕԳՈՍՏՈՍ 1903

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

Հրասարակութեանը ձեռնարկելով Հանրագիտակի այս բացառիկ քիւին, որ երբեմն յոյս պիտի տեսնէ, խմբագրութեանս նպատակն է ընթերցողներուն տալ բազմակողմանի նիւթերով՝ ընթերցելի յօդուածներու փունջ մը. ուր գրականը, բանասիրականը, գիտականը, գեղարուեստականը եւ ընթերցողներու օգտակար բոլոր նիւթերը հանելիք զանազանութիւն մը եւ պէսալիսուն տղանց մը ձեւացնեն:

Մեր ձեռնարկը գլուխ հանելու համար, մեզի օժանդակ պիտի ունենանք, օրուան կարող, սիրուած գրիչներէն մաս մը, որոնք հետզհետէ իրենց գողտրիկ յօդուածներովը պիտի պնենն քերթիս էջերը:

Յաւակնո՞ս գաղափարականներ չունինք՝ ըսելու համար քե՛ Հանրագիտակի բացառիկ քիւը հրաշակե՞տ հրասարակութիւն մը պիտի ըլլայ, որովհետեւ մեր նիւթական պայմանները շատ հեռու են կարենալ իրագործելի այդ տեսակ նպատակ մը: Բայց մեզի համար ասոնք խրջեցուցիչ դժուարութիւններ չպիտի ըլլան, եւ մենք կարելին պիտի ընենք՝ ընթերցողներուն նաշակին ու պահանջին գոհացում տալու համար:

Համեստ շրջանակի մը մէջ, մեր նպատակակէտը պիտի ըլլայ Հանրագիտակի այս բացառիկ քիւը ներկայացնել կարելի եղածին չափ փայլուն, անոր գնահատումը եւ բաշխելութիւնը ընթերցողէն սպասելով:

Ամեն կողմ ցոյց տրուած ընթերցասիրութեան մը եռանդն էր որ միշտ մեզ այս գործին, հրասարակելու բացառիկ քիւ մը, որ պարունակէ յօդուածներ՝ ամեն կարգի ընթերցողներու նաշակին յարմար, եւ ներկայացնէ ընթերցողը կշռացնելու վիճակ մը, իր 32 եւ երբեմն 48 էջի ստուար բովանդակութիւնովը եւ ծաւալովը:

Ամեն կողմ պակաս չեն, արհեստաւորներ, աղջիկներ, կիներ, ու-

սուցիչներ, ուսանողներ, առեւտրական գործերով զբաղող գրասե-
րիսասարդներ, որոնք պարբերաբար կուտն ու կուռ բան մը կարդա-
լու փափաքը կը զգան :

Մեր առաջադրութիւնը պիտի ըլլայ ուրեմն՝ գոհացում տալու հա-
մար այդ պահանջին, հրատարակել թէ՛ բովանդակութիւնով եւ թէ՛
ծաւալով նոյն պրակ մը, եւ զայն ձեռքը տալ անոնց՝ կուտն ընթեր-
ցանութեան մը համար :

Անոնց կը մնայ քաջալերել մեզ. եւ մեզի, իրենց նաւակին ու
եռանդին գոհացում տալ :

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆԸ

Կայ մարդկային միտք մը որ մասնաւոր իրողութիւնները կը
հաստատէ և ընդհանուր իրողութիւններ կը շղթայէ. ասի գիտա-
կան միտք կոչուածն է : Կայ մարդկային միտք մըն ալ որ կը զտէ
կը հաւաքէ քննադատութեան ձեռամբ, ճշմարտութիւնները. աս
ալ կարելի է կոչել պատմական միտք : Կայ ուրիշ մըն ալ որ կը
կազմէ և կը կարգաւորէ ամբողջական ճշմարտութիւնները : Բայց
որպէս զի այս երեք միտքերը կարենան գործել իրենց իսկական
բնութեանը մէջ պէտք ունին ֆննդագրութեան :

Ի՞նչ է քննադատութիւնը, և ի՞նչ կ'ընէ անոր հետեւող
քննադատը : Քննադատութեան պաշտօնն է հաւաքել ճշմարիտը
և միայն ճշմարիտը. իսկ քննադատը նախ կ'ընտրէ, կը հաւաքէ,
կը տարակուսի իր ընտրածին, իր հաւաքածին վրայ, և տարա-
կոյսը փարատելու համար կ'ապացուցանէ և որպէս զի կրկին
տարտամութեան և անստուգութեան մէջ չիյնայ, կ'ապացուցանէ
նաեւ իր առաջ բերած ապացոյցները՝ ծանօթ եւ հաստատուն
փաստերով : Քննադատին համար պատմագիր մը պէտք է ճառէ
այնպէս ինչպէս որ պէտք է, պատմագիրը իր առաջադրութիւնը
պէտք է նկատէ իբրեւ գիտութիւն, ան նպատակ պէտք չէ ու-
նենայ ոչ գովեստը և ոչ ալ պարսաւը : Ան պէտք չէ իր պատ-
մութեան իրողութիւններովը զինքը ունկրդողը յորդորէ առաքի-
նութեան և մոլութեան : Պատմագիրը ամէն զգուշութիւն պէտք
է ձեռք առնէ շտեմանելու համար ո՛չ ատելութիւն եւ ոչ ալ սէր,
իրեն չվերաբերի սիրտերն ու միտքերը ազնուացնելու եւ հոգի-
ները յանձանձելու գործը կամ պաշտօնը. քննադատին համար
պատմագիրը պաշտօն պէտք է ունենայ միայն եւ միայն բառնալ

ժամանակներու հեռաւորութիւնը՝ ժամանակակից ընելով ընթերցողը այն անձերուն եւ այն պատահումներուն որոնց վրայ կը խօսի եւ կը նկարագրէ:

Երբ պատմագիր մը իրեն չուկէտ ունի այս սկզբունքները, ալ դադրած է ան իր պաշտօնէն, այլ եւս ան գործ չունի, իր նկարագրած իրողութիւններէն հետեւութիւններ եւ եզրակացութիւններ հանելու գործը կը վերաբերի բարոյագէտներուն եւ քննախօսներուն: Սակայն հազուագիւտ է գտնել պատմագիր մը որ այս սկզբունքով շարժած ըլլայ, որովհետեւ չէ կարելի գտնել պատմագիր մը կամ գրող մը որ սրտմտի, զգացումները եւ բարքերը խեղաթիւրողներուն դէմ. չկայ մէկը որ սրտնեղի պատահարները նկարագրող բայց գոյնը փոխողներուն դէմ. հազուագիւտ է գտնել հեղինակ մը որ իրողութիւնները օրինակէ եւ հոգին չ'այլակերպէ: Այն որ մարդկային բարքերը ազնուացնելու պաշտօնն ունի պէտք է ապրի իրիւ հին՝ հիներու մէջ եւ նորերու մէջ իրբեւ նոր: Եւ անոնք որ ստուգիւ պատմագիրներ եղած են, անոնք հաւատարմօրէն կատարելով իրենց պաշտօնը բարոյական մեծ ազդակ եղած են իրենց պատկանած ժողովուրդին եւ կարկառուն փոփոխութիւններ եւ բարեշրջութիւններ մտցուցած են ժողովուրդին ամենդասակարգերուն մէջ:

Պատմագիրներու աշաւութեան հետեւանքն եղած է քննադատական միտքերու գոյութիւնը: Եթէ նոյն իսկ պատմագիր մը կարենար տեսնել մանրամասնօրէն իրողութիւններուն մէջ գտնուած թաքունութիւնները անկարող պիտի ըլլար զանոնք լրացնել քանի որ միշտ միջոցները եւ դիւրութիւնները պիտի պակսէին, եւ նկարագրած պատահարին պատկերը թերութիւններ պիտի ունենար: Ուրիշ միտք մը, քննադատը, պիտի լրացնէ այդ թերին խարբալելով իրողութիւններու, անձերուն եւ պատահարներուն խումբն ու տրձակը:

Քննադատը այն ատեն կը հետապնդի անոր, ճշմարտութիւնը ձեռք բերելու համար ապացոյցներ փնտռող սէրը պիտի ծնի իր մէջ, իբրեւ անկողմնակալ դատաւոր կրայոյզ հետազօտութեամբ մը իր սրամտութեամբ եւ յամառութեամբ իրողութիւնը ստուգելու համար եւ խաբուած ըլլալու մղձաւանջէն չբռնուելու համար, ճշմարտութիւնը կարկառուն երեւան պիտի բերէ: Քննադատական միտքը կ'ըսէ թէն « կը վազէ ամէնէն հեռաւոր աղբիւրներուն, վասն զի ամենէն յստակներն են անոնք, որչափ բնագիրը կոչտ է՝ այնչափ պատուական է այն. պերճախօսութեան մէկ կտորը յօժարութեամբ պիտի փոխանակէր քննադատը տձեւ ու կոպիտ ռոճով յորինուած հին գիրքի մը հետ, որուն փու-

չերը գրագէտի մը փափուկ ձեռներն կրնային վիրաւորել... : Վասն զի այն ատեն շօշափած կ'ըլլայ բուն իրողութիւնները » : Այսպէս քննադատը իր բաղձացեալ նպատակին՝ քննադատութեան հասած կ'ըլլայ, ամէն խաւար կը փարատի իր առջեւ եւ զայրացուկը ու բարկութիւնը կը դադրի, մէկ խօսքով, կը գոհանայ : Սակայն երբ ապացոյցներով ճշմարտութիւնն երեւան կը բերէ պէտք ունի իր ապացոյցներու ստուգութեանը, քանի որ գիտէ թէ մարդիկ ոչ միայն գիտութեամբ ու դիտումով այլ եւ ակամայ կողմնակալութեամբ մը, անգիտակից ստախօսութեամբ մը, առանց խաբել ուզելու, նոյն իսկ պատահական միամտութեամբ մը, կը խեղաթիւրեն իրողութիւնները, կամ աղէկ չտեսած կամ չհասկցած ըլլալուն համար : անոր համար որ, մարդ չ'է կարող ամէն բանի վերահասու ըլլալ կատարելապէս : Քննադատին պաշտօնն ուրեմն ամէնէն ծանրակշիռն է, որովհետեւ ճշմարտութեան մը ետեւէն երթալու համար կրնայ մոլորութեան մէջ իյնալ ու այն ատեն աւելի ծանր դատապարտութեան մը կնիքը կրել, քան այն հեղինակը որ խաբելու առաջադրութիւնն ունեցած ըլլայ այն ալ կամայ ակամայ : Ասոր համար քննադատը իր աչքին առջեւ պէտք է ունենայ այն ամէն հեղինակ որուն պէտք ունի : անկէց պահանջէ վկայութիւններուն ստուգութեան ապացոյցները, վերլուծելով զանոնք, պէտք է ստուգէ հարցներով անոր թէ ո՛ր ժամանակին մէջ՝ ո՛ր երկրի մէջ ապրեցաւ : Թէ ի՛նչպէս հաւաքեց իրողութիւնները, թէ այդ իրողութիւնները բաղդատութեան դըրա՞ւ յիշատակարաններու հետ : մէկ խօսքով իր ուսումնասիրած կամ վկայութեան կոչած հեղինակին նկարագրին և խառնուածքին թափանձե՞ց և գիտնայ թէ՛ հեղինակը իրողութիւնները բացատրելու և ըմբռնելու ի՛նչ տեսակ տրամադրութիւններ ունի, որովհետեւ մարդիկ իրողութիւնները իրենց տրամադրութիւններու համեմատ կը մեկնեն : Քննադատին աչքէն պէտք չ'է վրիպին ոչ մի վկայ եւ վկայութիւն, հին թէ նոր, թերի կամ ամբողջ, անոր աչքին առջեւ պէտք է հաւասարապէս կարեւորութիւն ունենան դրամ, ծխարան աւանդութիւն, սովորոյթ, բարք, երգեր, արարողութիւններ, նախապաշարումներ : որովհետեւ անոնցմով երեւան կուգան իրողութիւնները, իրենց ամբողջ փուլերովը : Վերջապէս պէտք է ուսումնասիրէ այն ժամանակը որուն մէջ ապրեցնել կ'ուզէ իր ունկնդիրները : այսպէս քննադատը կը յառաջանայ այդ դժուարանցանելի եւ լպիրծ ճամբաներու մէջէն մանրակրկիտ զգուշութիւններով : Որպէս զի քննադատին պաշտպանած դատը խժբժանքի եւ դատափետումի առարկայ չ'ըլլայ, անոր մէջ պէտք չ'է սպորի աչառութիւնը, կողմնակալութիւնը, նոյն իսկ գութը, քանի

որ իր պաշտօնը կրնայ ի հարկին վերաւորել բարեկամները որոնց հետ չփման մէջ է շարունակ մէկ խօսքով կախում պէտք չ'է ունենայ ոչ մէկ տեսակէտով, այլ պարտի ճշմարտին բնագոյնովը անոր հասնելու համբերութիւնովը ապրի:

Ահա այն կ'ըլլայ այն ատեն ճշմարիտ քննադատը եւ քննադատութիւնն ամբողջ:

Մ. ՍՈՒՐԵԱՆ

ԿՆՈՋ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

(ԳՐԱԿԱՆ ՏԵՍԱԿԷՏՈՎ)

Եթէ գրականութեանց պատմութիւնները աչքի առջեւ առնելով, մանրէտարանի մը լարուած ուշադրութիւնովը զննենք: Բազմազիմի բարդ — խնդիրներու կոյտերէն ակներեւ ճշմարտութիւն մը ի յայտ պիտի գայ, այն ալ կնոջ անուղղակի գործունէութիւնն է, մտաւորական դաշտին վրայ: Այսօրինակ ճշմարտութիւն մը ապացուցանելու հարուստ աղբիւրներ՝ թէ՛ նախաքրիստոնէական և թէ՛ քրիստոնէական գրականութեանց մէջ՝ դժուարին պիտի չթուի գտնել, քանի որ արական սեռը իր այս կամ այն կերպ ծագածէն ի վեր անընդհատ յարաբերութեան մէջ է գեղեցիկ սեռին հետ: Ու այս ճակատագրական առնչութենէ առաջ եկած են բիւրակերպիկ առանդավէպեր, որոնց հսկայ կարծր եթէ քակելու ըլլանք, միայն մէկ նկատելի թել պիտի գտնենք, այն է գեղեցիկին զգացումը, որ վայրենութենէ մինչեւ քաղաքակրթութիւն, միգամած արեւու կամ լուսաւորի մը չափ արտաքին ու ներքին փոփոխութիւններու ենթարկուած է: Ժողովուրդներու հըսկայ յեղաշրջումներուն մէջ, կնոջ դէմքը, ոգին ու բովանդակ ըզգայնակութիւնն են որ նորածին լուսնի պէս կ'երեւին, դարերու համապարփակ ամպերու ծոցէն: Հո՛ս պիտի ցոյց տամ առանց մանրամասնութեան մտնելու, հին ու նոր հեղինակութիւններ, որոնց հանճարին կրկնակի ծաղկումը ու հրաշակերտ գաղափարներու պոռթկացումը, կնոջ անխուսափելի զօրութենէն ծնունդ առած են, եւ զայն ներշնչումի ու յուզումի, ըլլայ այն օդային ու դրական, հրաշալի կուռքը նկատած են, մինչեւ իսկ մոռնալով, անոր ձիւնապիտակ անդրիին ներքեւ ծածկուած դժոխքը, զոր

Ռընան շատ լաւ կ'որակէ ըսելով « Շատ մի՛ քննէք կիներ, վասնզի թերեւս տխուր է հետեւանքը »: Վաղեմի դիւցազներգութիւններէ՝ Վալմիքիի ու Վիազայի երազուն միտքին խնդրական արդիւնքը նկարուած՝ Մահապարաքան-Վեհաները, որոնք Հնդիկներու հոգեբանութիւնն ու բովանդակ պատմութիւնը կը համապատկերեն, կնոջ անբծութեան եւ կամ սիրային զգացման միամիտ ըմբռնումին ազդեցութիւնը զօրեղապէս կրած են, եւ արդէն Հիմալայայի մայր անտառները անով ու միայն անով դիւթիչ կ'ըլլային, առանց որուն յաւիտենական տխրութեամբ պիտի լուացուէին. Նիրվանան իսկ այդ կնոջական ազդեցութեան « է՛հ, մնաք բարով »ը չէ՞ միթէ. — Հոմերոսի Իլիականն ու Ոդիսականը Հեղինէի մը ու Պենելոպի մը դրուագները չէ՞ն ու յայտնապէս այդ զուգեակ Հելլենուհիներուն ազդեցութենէն բանահիւստած չե՞ն, հելլենական, հռոմէական յունա-հռոմէական, արաբական ու յետոյ Եւրոպական գրական ու իմաստասիրական հարուստ բոսականութիւնները կնոջ Ես-ին արտացոլումով ոռոգուած ու կենդանացած չե՞ն միթէ: Համաշխարհական գրականութիւնը, իր համայնքովը ցոյց կուտայ թէ՛ կիներ, — որուն բնաշրջումը ըստ Սթենսըրի Տարուինի ու Լամարքի իր գազաթնակէտին հասած էր — դործած է ա՛յնպիսի ազդեցութիւն մը, արական սեռի հոգեբնախօսական վիճակներուն վրայ, որոնք զինքը յաւերժացնելու ձգտեցան տակաւ, ամեն դարաշրջանի մէջ, կնոջ ուղղակի եւ կամ անուղղակի ազդեցութիւնը բացերեւակի ի յայտ կուգայ տիեզերական հռչակի տէր հանճարներուն՝ հրաշակերտներու խորն իսկ, որոց մէջէն քանի մը հատը միայն անցողակի ցոյց տալ անտեղի չպիտի համարէի. — Շէյքսպիր՝ իր Տէսդէմոնայով. Ժիլլիէթով, Ուիլիշայով յաւերժացուց կնոջական Եսին անհուն ազդեցութիւնը մարդուն ճակատագրին վրայ, Պայրըն. Շէլլի՝ Վոլթէր, Սքոթ եւայլն վարուեցան այդ ուժէն՝ մրրկավար տերեւի մը պէս: Հոս ինչո՞ւ մոռնանք, մուսլ զգայնութեամբ զեզուն Նոճիներու երգիչը՝ Պետրոս Դուրեան, որ այդ անխուսափելի ոյժին զոհ գնաց. հին՝ միջին, արդի ու ժամանակակից հոյլ մը գրագէտներու միտքը՝ կրակ է Նէ-ի մը ազդեցութեամբը, որ արեւուն լոյսին նման ճովատագրապէս, այսինքն անպատճառ պիտի ազդէ: Ահա մտքի ճոխ բուսականութեան վրայ՝ արեւու մը դերը կատարած է կիներ, առանց ինք գըրած ըլլալու: Աշխարհի մէջ, գեղեցկագիտական ո՛ր եւ է գործ կնոջ մէկ նշոյլն դեռ կը ծածկէր իր մէջ, որովհետեւ գեղեցկագիտութեան մարմնացումը բնութիւնը ընդունելով հանդերձ, չենք կարող ուրանալ կնոջ ալ, արդի կամ հին արուեստագէտին և կամ

գրագէտին վրայ գործած շեշտակի ազդեցութիւնը: Արական սեռը կնոջ մարմնական ու հոգեկան անդիմադրելի ուժերուն հիացիկ երգը եղած է, զոր կարելի չպիտի ըլլայ ժխտել, քանի որ գրականութեանց պատմութիւններն ալ զայն կը հաստատեն:

Մ. ԹԱՊԱԳԵԱՆ

ՈԳԵՀԱՐՅՈՒԹԻՒՆ

Ա.

Ոգեհարցութիւնը հիմնուած է ոգիներու կարծեցեալ գոյութեան և յայտնումներու իրականութեան վրայ, որք կ'երեւին կենդանի մարդոց: Նախ խնդիր է թէ ի՞նչ են ոգիները:

Հատ ոգեհարցներու, ասոնք առանձին էակներ չեն արարչագործութեան մէջ, այլ երկրի վրայ ապրողներու հոգիներն են. ասոնք իրենց մարմնական պատեանէն ելնելէն վերջ կը բնակին ու կը յածին միջոցին մէջ...:

Մարդուն մէջ կ'ըսեն անոնք երեք էական բան կայ. 1. Հոգի կամ ոգի, այսինքն իմացական կորիզը ուր կը կայանայ մտածումը, կամքը և բարոյական զգացումը. 2. Մարմինը որ է նիւթական պատեան կոշտ և ծանր, որ հոգին յարարեցութեան կը դնէ արտաքին աշխարհին հետ. 3. Հոգեպատեան, որ ծորանուտ և թեթեւ պատեան մըն է և միջնորդութեան դեր կը կատարէ հոգիին և մարմինին միջեւ. Երբ արտաքին պատեանը մաշած է, և այլ ևս չկրնար պաշտօնավարել, կ'իյնայ, ու հոգին կը զատուի անկէ: Ինչպէս պտուղը կը մերկանայ իր կճեպէն, ինչպէս ծառը իր կեղեւէն, մէկ խօսքով, ճիշդ ինչպէս հին հագուստ մը գործածութենէ կը դադրեցնենք: Այս է ահա Մահ կոչածնիս պարզապէս: Պէտք է գիտնալ որ մարմինը միայն կը մեռնի, հոգին չմեռնիր: Մարմնոյն մահովը հոգին իր կապերէն կ'ազատի, կը բաժնուի անկէ եւ իր ազատութիւնը կը գտնայ բոժոժէն դուրս ելլող թիւթեռնիկին նման: Բայց ասով հոգին միայն և միայն նիւթական մարմինը կը թողու, կը պահէ հոգեպատեանը որ կ'ըլլայ տեսակ մը եթերային, գոլորչեման, անկշռելի մեզ համար և մարդկային ձեւով մարմին մը, որ սկզբնապիւ առն է մարդուն: Հոգեպատեանը իր վիճակին մէջ անտեսանելի է, բայց կրնայ ենթարկուիլ ու և իցէ եղանակաւորումներու որոնք զինքը առժամայ կերպով մատչելի կ'ընեն տեսողութեանը և շօշափումի, երեւոյթներու ատեն, ճիշտ այնպէս ինչպէս որ գոլորչին կը տեսնենք երբ սեղ-

մուսաժ ու խտացած է: Հոգեպատեանի միջոցաւ է որ ոգին կ'ազդէ անշարժ նիւթին և շարժումի եւայլն գանազան երեւոյթներ կ'արտադրէ:

Ոգիները իրենց հոգեպատեանով երեւցած են ապրող մարդոց ժամանակակից դարագլուխէն շատ յառաջ իսկ, ասոր ապացոյց են բոլոր այն զրոյցները ուր խնդիր կայ հոգեգէշներու, ուրուականներու, ճիներու մասին: Այս կարգի երեւոյթներու նախապաշարումը հին է աշխարհին չափ: Բայց ոգեհարցները նկատողութեան չեն առնուր ոգիներու կանխագոյն յայտնումները, անոնց համար նշանակութիւն չունին անոնք: Ոգեհարցութեան բուն սկզբնաւորութեան թուականն է 1848ը: Այս թուականին Միացեալ Նահանգներու մէջ ուշադրութիւն հրաւիրուեցաւ արտաքուստ արտակարգ գանազան երեւոյթներու վրայ, նկատողութեան առին, գոր օրինակ, աղմուկներ, զարնուած հարուածներ, առարկայից շարժումներ եւլն. զորս մարդ չէր կրնար, կ'ըսէին հետեւողները, վերագրել ու է ծանօթ պատճառի մը: Ուստի հետեւցուցին թէ այս երեւոյթները յառաջ կուգային քանի մը անձերու ազդեցութեամբ, որոնց միջնորդ անունը տրուեցաւ. այս միջնորդները սակայն գործնական միջամտութիւն մը ցոյց չէին տար: Սոյն միջոցներուն էր որ սեղաններ դարձուցին և թէ կարծեցին տեսնել սեղաններու այս շարժման մէջ ոչ միայն ինքնաշարժութիւն այլ նաեւ իմացականութիւն: Արդարեւ կ'ըսեն ոգեհարցները, սեղանները կ'ուղղուին աջ կամ ձախ դէպի որոշեալ անձ մը, կը կանգնին հրամանով մը մէկ կամ երկու ոտքերու վրայ, պահանջուած հարուածներու թիւին չափ բաղխում կը կատարեն անոնք, եւայլն:

Իմացական այս արդիւնքները բացատրելու համար ոգեհարցները երեւակայած են իմացական պատճառներ: Նախ ուղեցին այս պատճառները տեսնել ներկաներու իմացական ցոլացումին մէջ. բայց որովհետեւ ներկայ անձերու մտածումներէն բոլորովին օտար արդիւնքներ ձեռք բերին, ստիպուեցան դիմել աներեւոյթ էակներու: Այս տեսութեան իբր՝ փաստ ծառայեցուցին երեւոյթին բնութիւնը, նկատելով որ ամէն երեւոյթ իրեն համաբնոյթ պատճառն ունի:

Ոգեհարցութիւնը իր ծննդավայրէն՝ Ամերիկայէն անցաւ Ֆրանսա և Եւրոպայի գանազան կողմերը ուր զբաղեցուց շատ մը նոյն իսկ կարող մտքեր: Ոգեհարցութեան վարդապետութիւնը հաստատուեցաւ ու քարոզուեցաւ ալ այնուհետեւ, մասնաւոր որ ճարտար Ամերիկացիները անկէ լուրջ չահով մը կ'օգտուէին:

Ինչպէս տեսնուեցաւ, կատարեալ վարդապետութիւն մըն է

և ոչ մէկ տեսակէտով պակաս, միայն թէ զայն վայելելու համար հաւատք ունենալու է, կ'ըսեն ոգեհարցները: Ոգեհարցը նախ երեւոյթները ապացուցուած կը նկատէ, որոնք ստուգիւ խնդրոյ ներքեւ են և որ զայնս կը բացատրէ ենթադրութեամբ մը որուն պէտք է հաւատալ, առանց որ և իցէ քննութեան: Կ'արժէ հոս պատմել ոգեհարցութեան ծագման պատմութիւնը:

1848 մարտ ամսուն վերջերը, Ֆօքս անուն ընտանիք մը, որ Ուայն երկրին մէջ Հիտէսվիլ գիւղաքաղաքը փոքրիկ տան մը մէջ կը բնակէր, երեկոյեան դէմ լսեց անսովոր աղմուկներ վերնա-յարկի սենեակներուն մէջ. լսեց որ տախտակամածին հարուածներ կը զարնուէին, և տեսաւ որ աթոռները շարժած ու տեղափոխուած էին եւ ամէն կողմ տակնուվրայութիւն կը տիրէր: Սենեակներն այցելեցին. ոչ ոք կար: Հետեւեալ օրը միեւնոյն աղմուկները յառաջ եկան, և Պ. Ֆօքսի աղջիկներէն մին զայն արտադրող աներեւոյթ ազդակին հետ խօսելու գաղափարը ունեցաւ. « Ինծի պէս ըրէք. համրեցէ՛ք, ըսաւ ան, մէկ, երկու, երեք, չորս . . . »: Աներեւոյթը զարկաւ մէկ, երկու, երեք, չորս հարուածներ: Օրիորդը նուազեցաւ: Այս իրողութիւններէն յետոյ ամբողջ քաղաքը հետաքրքիր երեւոյթ մը առաւ: Եւ որպէսզի իրողութիւնը կատարեալ ըլլայ, Ֆօքսի տան նախօրդ վարձուոր մը եկաւ խիստ ծանր իրողութեան մը վկայութիւնը տալ որ այս գերբնական երեւոյթները կը յիշեցնէին:

Ան, գիշեր մը խոր մթութեան մէջ, լսած էր որոշարար երկու հարուած զարնուիլը իր դուռին, բանալու գացած էր. ոչ ոք կար: Ասիկա բաւական էր աւելցնելու հոմարի իր գրգռման չափը: Խորհրդաւոր զարնողը ամէն գիշեր կը յաճախէր Ֆօքսի տունը, որ կատարելապէս կը պատասխանէր ամէն հարցումի: Ֆօքսի գաւակներուն տարիքը հարցուցին. կը զարնէր այնչափ հարուած որքան ասիք ունէր նշանակուած տղան. հարցուցին թէ կենդանի էա՞կ մըն է. կատարեալ լռութիւն. հարցուցին թէ ոգի մըն էս դու. հարուած մը որ կը նշանակէր « այո »: Թէ ո եւ իցէ թշնամանք մը ընդունա՞ծ էր. երկու հարուած խիստ սաստիկ, որ կը նշանակէր իր վիշտը: Վերջապէս ակիապէթը գործածելու գաղափարը ունեցան. ըսին իրեն որ հարուած մը զարնէ իր անունը բաղկացնող իւրաքանչիւր գրի համար, ցորչափ պտըտցնէին սլաքի մը ծայրը բոլոր գիրերուն վրայ յաջորդաբար: Հասկցան այսպէս թէ զարնող ոգին կը կոչուէր Շարլը Բայն, որ մեռած էր այս տան մէջ և խնդրանքներ կ'ընէր:

Աս փոքրիկ ծաղրածութեան գաղիչները պայծառ երեւակայութեան տէր չէին, որովհետեւ մարդուն այս արկածը՝ որ կը

պահանջէ իր գերեզմանատեղին, կը գտնուի կրտսերն Պի-նիոսի նամակներուն միոյն մէջ: Կարասեաց ճարձատիւները, ձեզունին զարնուած հարուածները արտադրուած էին պարզապէս, ինչպէս գիտցուեցաւ ետքէն, Պ. Ֆօքսի, տակաւին բոլորովին և որովայնախօս աղջիկներուն միոյն կողմէ որ կը ջանար, իբր հաճոյալի ժամանց, խաբել իր ծնողքը եւ դրացիները պատասխանելով իր քրոջ ձեռքերու և նոյն իսկ իր ձեռքերու բաղխումներուն, որովհետեւ այդ սրովայնախօս աղջնակը կարող էր նաեւ հարցումներ ընել ու պատասխանել:

Գալով աներեւոյթ ոգիին որ զարկած էր երկուհարուած նախկին վարձուորի տան դուռին, կ'երեւի թէ սրիկայ մըն էր, որ իր կապարալարովը սովորական զուարճալիքի մը պէս, ապշանքներ զգալ տալու համար էր մարդուն որ դուռը կ'ելնէ բախման ժամուն, գլուխը բամպակէ գտակ, գիշերնոցով և ձեռքը աշտանակ մը:

Փոխանակ այս երեւոյթներուն ընական բացատրութիւն մը տալու չահագործուեցաւ ժողովրդեան դիւրահաւանութիւնը եւ Ֆօքսի ընտանիքը, միշտ խաբուած որովայնախօս օրիորդէն կամ թերեւս իր կամակիցէն, ստացաւ արագ համբաւ մը:

Թարգմ. Մ. Ի.

ԸՍՈՐԵ—ԵՓՐԵՅԱԿԱՆ ԶՐՈՅՅ ՄԷ

ԶՐԷՆԵՆԵՐ ՄԱՍԻՆ

Էլ-Ասուր կը շրջագայէր օր մը դաշտին մէջ, իր բարեկամը Զայիտին հետ (վարդապետ օրինաց) և ջրհեղեղի վրայ կը խօսակցէր անոր հետ:

« Բոլոր ազգերը, կ'ըսէր Էլ-Ասուր, իրենց տոհմային աւանդութեանց մէջ կը պահեն այս մեծ հեղեղին յիշատակը, բայց ոչ մէկը կրնայ անոր ստոյգ թուական մը ցոյց տալ:

— Ո՛չ, պատասխանեց Զայիտ, բայց եւ այնպէս բոլոր մարդիկ կ'ընդունին զայն և կը համաձայնին նկատելու այդ արկածը իբրեւ աստուածային արդարութեան գործ մը. Աստուած՝ պատժելու համար մարդիկը՝ իրենց անսահման չարութեանցը մէջ ջուրերը դրկեց:

— Ջրհեղեղը և ոչ մէկը խեղդեց, միջամտեց բարի ծերունի մը, որ հոն մօտը կը հսկէր այծերու հօտի մը վրայ:

— Բարեկամ, ըսաւ անոր Զայիտ, չես կրնար ուրանալ կարծեմ ջրհեղեղին գոյութիւնը:

— Ո՛չ, բայց ես կը պնդեմ թէ ան ոչ մէկը խեղդեց, եթէ քիչ մը մտիկ ընէք ինձի, ես պիտի պատմեմ թէ մարդիկ ինչո՞ւ եւ ի՞նչպէս կորսուեցան:

Էլ-Ասուր և Զայիտ նստան խոտերու վրայ եւ ծեր այծարածը անոնց պատմեց հետեւեալ զրոյցը:

« Սերովբէները եթերական աշխարհներու մէջ կը բնակին. իրենց պաշտօնը կը կայանայ հսկելու մարդոց հոգիներուն վրայ և առաջնորդելու անոնցմէ արժանաւորները գաղափարաց աշխարհը:

« Ծառոց վրայ գտնուած տերեւներուն թուոյն չափովը հազարաւոր տարիներ հոն բնակելէ վերջը, հոգիները կը թեւակոխեն երկնային լուսոյ սահմանները, որոնք դրախտ առաջնորդող սանդուխտ առաջին աստիճանն են տակաւին:

« Իւրաքանչիւր աստիճանը յաջորդաբար անցնելէ եւ իւրաքանչիւրին մէջ, ծովու ափունքը գտնուած աւազներու թուոյն չափ, հազարաւոր տարիներ եւս սրբագործուելէ ետքը, հոգիները կը միանան այն մեծ Ամբողջին հետ, որ է Աստուած:

« Բայց այսչափ ահագին տարեշրջանները, մարդոց որդիներուն համար սարսափելի կերպով երկայն կը թուին, սակայն սերովբէներու համար ասոնք փայլակի մը տեւողութիւնը հազիւ ունին. եթէ մին ճշգրիտ գաղափար մը կազմէր ուղէ, Ամենակարողին յաւիտեականութեան վրայ եւ գիտնալ թէ ի՞նչ կ'արժէ այսքան երկար ժամանակամիջոց մը, թո՛ղ խորհրդածէ նա՛ Մարգարէին սա սուրբ խօսքին վրայ:

« Հազար տարին անգամ մը եւ եթէ արծիւ մը՝ եթէ իր թեւերով թեթեւակի դաչէր պողովատիկ լեռան մը կշտին, զայն հողար անգամներ արդէն պիտի մաշեցնէր մինչեւ խաբիսխը. անհունութեան վրայ առանց դեռ ստուեր մ'իսկ կապմած ըլլալու »:

« Ուստի եղաւ որ Սերովբէները, որոնք սովորաբար աշխարհիս վրայ մինչեւ երեք հոգիի կ'առաջնորդէին դարու մը մէջ, հազարաւոր տարիներու տեւողութեան մէջ, ընելիք դուրձ մը չունեցան. մարդիկ ալ աշխարհիս վրայ այնչափ ամբարշտացած էին: Սակայն սքանչելի գեղեցկութեամբ օժտուած դեռատի աղջիկ մը մեծ յոյսեր կուտար եւ բոլորովին կը վստահացնէր թէ իր հոգին գաղափարներու աշխարհը պիտի անցնէր. դժբաղդաբար Ազիւր սերովբէն, որ այս սքանչելիքին վրայ կը հսկէր, անոր նը-

կատմամբ սէր մը յղացաւ, ու փոխանակ առաջնորդելու, զանիկա թողուց իր կալքին:

« Ինչ որ մարդոց՝ նոյնը չէ թոյլատրուած հրեշտակաց. իղձը ատելութիւնը, փառասիրութիւնը, ագահութիւնը գետնաքարշ կիրքեր են, որոնցմէ պէտք չէ երբեք փորձուին հոգեղէն էակները:

« Ազիւր տարագրուեցաւ լուսաւոր երկինքէն եւ դատապարտուեցաւ երկրի վրայ իբր մարմնաւոր էակ ապրելու ի պատիժ իր այս թերացումին:

« Իր պատիժը այն ատեն պիտի լրանար, երբոր գտնուէր բաւական իմաստուն մէկը, որ գոհ ըլլար միայն իրեն պէտք եղածով, առանց աւելին ունենալ բաղձալու: Ազիւր հասկցաւ թէ իր պատիժը բաւական երկար պիտի տեւէր, սերովքէից հրամանին համեմատ տաճար մը շինեց և անոր մէջը դրաւ ոսկիներու մեծ կոյտ մը: Տաճարը բաց եւ մէջի ոսկիի գանձերը թոյլատրուած էր փափաքողներուն տանիլ:

« Ազիւր որ քիչ մը ապագան նախատեսելու զօրութիւնը ունէր, իր սրտին սիրածը քնացուց Յետոյ սպասեց:

« Հրաշալի տաճարը շուտով հռչակուեցաւ ամէնուրեք:

« Հոն առաջին անգամ այցելողները ոսկիի ծանրութեան տակ կքած դուրս ելան: Անոնց յաջորդները բազմաթիւ ըլլալով իրարմէ, առաջ ներս մտնելու համար սկսան իրարու հարուած փոխանակել, բայց մտնելէն եւ ելլելէն վերջն ալ ինքզինքնին վտանգի մատնուած կը տեսնէին ու ստիպուած էին դարձեալ պայքար մղել իրենց թանկագին գոյքը կտրենալ պահպանելու համար:

« Զօրաւոր մէկը եկաւ այդ տաճարը գրաւելու. մի ուրիշ ախոյեան ալ գէն ի ձեռին, անոր հետ կռուեցաւ. ուրիշ մ'ալ յաղթուողն կողոպտելու եկաւ. չորրորդն ալ այնպէս ըրաւ. նոյնպէս ուրիշներ ալ. վերջապէս կը յաղթուին:

« Երկար տարիներու պատերազմներէ ետքը, մինտկ ժողովուրդ մը գանձին բացարձակ տէր եղաւ. Այս ազգը կրցաւ հարստութեամբ ճոխանալ. բայց որովհետեւ բոլոր կենդանիք, պատերազմի միջոցին, սնունդ եղած էին բանակներու, ալ ուտելու բան չէր մնացած:

« Ամէնէն տկարագոյնները սկսան երկիրը հերկելու. այս վերջինները հարուստ՝ աշխատութենէն խոյս կուտային. այն ատեն պատերազմի վերսկսան դարձեալ ու ծանր համեմատութիւններ առաւ հետզհետէ եւ այս մնացած մարդիկ ալ բնաջինջ եղան եւ այն՝ որ կրցած էր մինչեւ վերջ դիմադրել, անթուութենէն ոսկեկոյտի մը վրայ վախճանեցաւ:

« Ազիւր կռահեց, որ հրեշտակները իր աքսորը մարդկային ազգին պատիժին կը գործածէին, ա'լ մէկուն տաճար գալը չտեսնելով՝ երկիրը ամայի եւ զինքն ալ կորսուած կարծեց:

« Օր մը երբ կը հառաչէր դառնութեամբ լեցուն, մարդու մը գալը տեսաւ, սա, տաճարին դռներէն ցատկելով՝ ներս անցաւ: Տաճարէն, ինչպէս շատեր մինչեւ այն ատեն առած էին, միշտ առատապէս ոսկի առաւ եւ անոնց հետ երկար ատեն զուարճացաւ իբր խաղալիկ մը, երբ պիտի մեկնէր անոնք՝ ամէնքն հեռացած մարդուն գլուխը նետեց ու առաւ քալեց:

« Ո՛հ, ահա գտնուած էր մէկը որ աւելիին՝ չէր բաղձար:

« Անմիջապէս հմայքը փարատեցաւ, Ազիւր իր մարմնեղէն ծածկոյթէն մերկացաւ, երկրորդ անգամ հոգեղէն էակ դարձաւ եւ իր օգեղէն թեւերը ու անշոշափելի մարմինը վերստացաւ. իր պատիժը լրացած էր:

« Լուսեղէն երկինք բարձրանալէն առաջ, զինք ազատող այս մարդուն շնորհակալութիւն յայտնեց, այս մարդն անոր իբր պատասխան միայն ծամածռութիւն մը ըրաւ: Այս կարծեցեալ իմաստունը որ ապուշ մըն էր լոկ, անտառը կ'ապրէր

« այց Բպէտք էր երկիրը մարդերով բնակելի ընել: Սերովբէն՝ ծովերը երկրին վրայ թող տալէ եւ ցամաքը ամուսնամաքելէ անմիջապէս վերջը, արթնցուց դեղանի աղջիկը եւ զայն ցուց կարծեցեալ իմաստունին հետ:

« Ահաւասիկ թէ ինչո՞ւ եւ ի՞նչպէս ջրհեղեղը մէկը չխեղդեց, բացառանչեց ծերուկ այծարածը, » եւ վերջացուց:


— Տե՛ս, ըսաւ Զայիտ, իր բարեկամին, հովիւներու զրոյցներն իսկ կ'աւանդեն թէ ջրհեղեղն, մարդկանց որդիներուն շարութեանցը համար պատահած է:

— Իւրաքանչիւր ազգ եւ ժողովուրդ իր պատմութիւնն ունի, պատասխանեց էլ-Ասուր եւ իւրաքանչիւր ազգ կը պնդէ թէ ճշմարտագոյնն իրենն է. բայց Աստուած միայն մեծ է, եւ ոչ մէկն Անոր խորհուրդները կրնայ ճանչցած ըլլալ երբեք:

— Դուք իմ պատմութեանս վրայ բան չէ՞ք ըսեր, դիտել տուաւ ծերունին:

— Բարեկամ, կրկնեց էլ-Ասուր, մենք կը մտածենք թէ այժմու մարդիկն ալ անցեալինէն աւելի բանական չեն, եւ թէ Ազիւր Սերովբէն եթէ իր գանձովը նորէն երկիր դայ, աշխարհիս կատարածը մօտեցած պիտի ըլլայ:

Բ. Գ. ԻԶՄԻՏԼԵԱՆ



ԱՐԱՉՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԿՆՈՋ

Ամէն մարդ գիտէ թէ կիները, ինչպէս նաեւ այրերը կը տարբերին իրարմէ նկարագրով, խառնուածքով, բարքով: Ինչո՞ւ այս տարբերութիւնը: Բանաստեղծ փիլիսոփայ մը Սիմոնիդէս թողած է խիստ եզակիան նկարագրութիւն մը կնոջ արարչագործութեան համար, որ կը ջանայ արտայայտել նկարագրի այն տարբերութիւնը որ կայ իգական սեռի, պատկանող անհատներու մէջ:

Ահա իր հատուածը:

« Ի սկզբան Աստուած կիներու հոգիներն ստեղծեց իրենց մարմինէն անջատ վիճակի մը մէջ, և զորս Աստուած կազմեց զանազան նիւթերով:

« Անոնցմէ ոմանք կազմուեցան այն խառնուրդներով, որոնք կը գտնուին խոզի մը կազմութեան մէջ: Այս կարգի կին մը աղտեղի է իր տան մէջ և որկրամոլ՝ սեղանի վրայ, աղտոտ է ան իր զգեստներուն մէջ և իր մարմինին համար, և իր բնակած տունը ախոռի մը կերպարանքը միայն ունի:

« Աստուած իգական հոգիներու երկրորդ տեսակ մ'ալ պատրաստեց այն նիւթերէն որոնք կը ծառայեն կազմելու ազուէսը: Այն կինը որ այդ խառնուրդէն կազմուած է ունի միտք և դատողութիւն, կը ճանչնայ բարին եւ չարը, և իր թափանցկոտ տեսութենէն բան մը չվրիպիր: Այս դասակարգի կիներէն ոմանք առաքինի են և ոմանք մոլութիւններ ունին:

« Երրորդ տեսակը շինուեցաւ շան մասնիկներէ, եւ այն կիները որոնք այդ մասնիկները ընդունեցին անոնք են զորս մենք պոռոս կը կոչենք, այսինքն կը նմանին այն անասուններուն որոնցմէ իրենք սերած են, որոնք կը հաչեն անդադար, կը պոռան, կը գոչեն իրենց մօտեցողներուն դէմ, որոնք կ'ապրին շարունակական կանչուըռտուըներու մէջ:

« Չորրորդ տեսակը ստեղծուեցաւ հոգէն: Այդ տեսակ հոգի մը կը կենդանացնէ ծոյլերը, որոնք տգիտութեան և անգործութեան մէջ կ'ապրին, որոնք ամբողջ ձմեռը վառարանը չեն թողուր, եւ եռանդով մը սեղանի կը փութան:

« Հինգերորդը շինուեցաւ ծովէն: Այս տեսակ հոգի մը կ'արտադրէ անհաւասար հիւթերը, որոնք ամէնէն աւելի խորին հանդարտութիւնը սոսկալի փոթորկի եւ աշխարհի ամենագեղեցիկ լուսաւորութիւնը խաւարի կը փոխեն, Եթէ անծանօթ մէկը տեսնէ այդ կարգի կիներէն մին իր գեղեցիկ բարքին մէջ, պիտի

կարծէ թէ բնութեան հրաշալիքներէն մին է, բայց եթէ վայրկեան մը սպասէ, իր նկատողութիւններն եւ խօսքերը անմիջապէս կը փոխուին. այն ատեն այդ կինը իրեն կատաղութիւն միայն կը ներշնչէ. ճամարիտ ուրական մը պիտի ըլլայ այն և ոչ ուրիշ բան:

« Վեցերորդը բաղկացած է այն գեղանիւթերէն որոնք կը գործածուին կազմելու էջը կամ ուրիշ գրաստ մը: Այս կարգի կիները բնականաբար արտաքոյ կարգի ծուլութիւն մը ունին, բայց երբ իրենց ամուսինները կուգան կապտել իրենց հեղինակութիւնը, կը գոհանան չորակերութեամբ ապրիլ, եւ կը ջանան անոնց հաճոյ ըլլալ:

« Եօթներորդ տեսակ նիւթը եղաւ կատուն, այս խառնուրդով կիները մեղմադճոտ, անհեթեթ եւ տրտում բնութիւն մը ունին և միշտ պատրաստ են ցտեղու իրենց ամուսինները: Նաեւ այս տեսակ կիները հակամէտ են ի գործ դնելու պզտիկ գողութիւններ և խաբէութիւններ:

« Ծայեկը իր ծածանուտ բաշովը՝ որ լուծի տակ չէ մտած՝ ծառայեց կազմելու ութերորդ տեսակը: Այն տեսակ կիները՝ որոնք երբեք ակնածութիւն չունին իրենց ամուսիններուն նկատմամբ, իրենց բոլոր ժամանակը կ'անցունեն և կը զբաղին յարգարուելով, խոսակցելով իրենց մաղերը և ծաղիկներով զարդարուելով: Այս կարգի կին մը հաճոյալի է օտարի մը համար. բայց յոյժ աւերող ստացողին համար. եթէ այս վերջինը չ'ըլլայ չափազանց հարուստ մը որ ինքզինքը կուտայ այս տեսակ պաճուճապատանքի մը:

« Իններորդը, կապիկէն առաւ իր ծագումը, այսպիսիները տղգեղ են և չարամիտ: Անոնց նման չունին գեղեցկութիւն այլ կը ջանան նսեմացնել եւ ծաղրականի փոխել ամէն ինչ որ գեղեցիկ կ'երեւի ուրիշներու վրայ:

« Վերջապէս տասներորդ եւ վերջին տեսակը յառաջ բերուեցաւ մեղուէն, երջանիկ է այն այրը, որ կին մը ունի այս ծագումով. նէ արատաւորեալ չ'է ո եւ է մոլութեամբ. այսպիսի կնոջ մը կազմած ընտանիքը յաջողութիւն կը գտնէ եւ կը ծաղկի իր տնտեսագիտութեամբ. նէ կը սիրէ իր ամուսինը եւ կը սիրուի անկից, սերունդ մը կ'ունենայ գեղեցիկ եւ առաքինի գաւակներու. նէ կ'որոշուի իր սեռի միւս ամէն տեսակներէն, չնորհք եւ խաղաղութիւն կը չընկալուին ընտանիքը. խառնակեաց կիներու հետ չգտնուիր, և ժամանակ չ'անցուներ զուր շատախօսութեամբ: Այդ տեսակ կին մը զարդարուած կ'ըլլայ առաքինութեամբ եւ խոհեմութեամբ: Մէկ խօսքով ամենալաւ կինն է առ զոր Արամազդ երբեք կրնայ տալ մարդուն »:

ՄԱՐԻ

ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ԵՐԳ

Աշխատութեան քաղցր երգն է՝ որ կը բարձրանայ պատկից տունի խարխուլ սենեակին մութ անկիւնէն:

Հայուհիին քեզկեահը տեղաւորուած է հո՛ն, ուր առաւօտէն մինչեւ իրիկուն եւ յաճախ մինչեւ կէս գիշեր՝ պիտի գործէ նէ, հանելով թէզկեահին միօրինակ ձայնը:

Միօրինակ, միանուագ ձայն՝ ուրկէ սոսկ ու աշխատութեան երգն է որ կը բարձրանայ:

Շը՛խկ... շը՛խկ շը՛խկ... առաւօտէն մինչեւ իրիկուն սանտրը ետ, առաջ պիտի քչէ նէ, պիտի քչէ՝ ու պիտի քչէ՝, առաւօտէն մինչեւ իրիկուն՝ որովհետեւ աղքատ է:

Պիտի քչէ՝ ու պիտի քաչէ՝ շը՛խկ... շը՛խկ... շը՛խկ, աղքատ անօգնական է. պիտի քչէ որ ստակ գայ, պիտի քաչէ՝ որ հաց գայ տունը:

Պէտք է ետ առաջ քչէ շարունակ քեզկեահին սանտրը, ու թելերը հիւսէ, որպէս զի հաց գայ տունը, երեք չորս պճըլիկներ՝ իրենց քրոջ հետ, կենսաբեր, օրհնեալ՝ հացին կը սպասեն. թող կտո՛ր մը ըլլայ, թող չո՛ր ըլլայ ան. հոգ չէ՛, բայց միայն հաց ըլլայ...:

Հա՞ց... չէ՛, չէ, քրտինքով, արցունքով շաղվուած խմորի կտոր մը՝ որու վրայ միմիայն աշխատող մօր մը վիշտն ու տառապանքը կը կարդացունին որոշակի:

Վիշտ ու տառապանք՝ որ կը փարատին աշխատութեան օրհնաբեր արդիւնքներով. ժամանակը՝ տրոմութեան վշտալից արցունքները՝ ուրախութեան արցունքներու պիտի փոխէ անոր աչքերուն վրայ, եւ տառապանքներէն, տքնութիւններէն ետքը՝ սիրտի, հոգիի անդորրութիւն մը պիտի շնորհէ հէգ բայց աշխատասէր հայ մօրկանը:

Անդորրութիւնն սիրտի եւ հոգիի, երջանկութիւն անանց, քե՛զ, ո՛վ վաստակաբեկ մայր, հանէ թէզկեահիդ ձայնը շը՛խկ... շը՛խկ... շը՛խկ. հանէ՛ այս ձայնը միօրինակ ու միանուագ. աշխատութեան, ճշմարիտ երջանկութեան հիասքանչ երգը կը կարդացուի հոն:

Այդ շը՛խկ շը՛խկիցի աշխատութեան միանուագ երգէն՝ երջանկութեան վտակը կը հոսի. խմէ՛, կշտացիր անկէ: Հանէ՛ թէզկեահիտ ձայնը շը՛խկ... շը՛խկ... շը՛խկ... հանէ՛ այս ձայնը միօրինակ ու միանուագ, թող հիւսուին թելեր արագ արագ, ու երջանկութեան երգը՝ վե՛ր բարձրանայ հեշտանուագ:

ԿՐԱԿՆ ԻՐ ԿԵՆՍԱՏՈՒ ՏԱՐՐ

Բոցերու գոյութենէն կրակ տարրին գոյութիւնը եզրակացնելը դիւրին է: Անկարելի չէ նաեւ հանգունակութիւն մը դնել երկրային սովորական և հրաբլխային կրակներու, արեգակնային կրակներու, և փայլակի կրակներուն միջեւ, ինչպէս կ'ընեն վեհաքերէր Բագնի (Կրակին) երրեակ ձեւին վրայ կը խօսին եւ կը վարդապետեն:

Ստուգիւ կրակը միայն չգտնուիր հոն ուր տեսանելի է, կը գտնուի նաեւ ամենուրեք թաքուն կերպով. կը գտնենք զայն երկինքի մէջ, որովհետեւ անկէ դուրս կը ցայտէ փայլակի ձեւով եւ թէ հոն կը բարձրանայ բոցի ձեւով, զայն կը գտնենք երկրի ծոցին մէջ, որովհետեւ անկէ դուրս կը ժայթքէ հրափրփուրի հետ, մինչեւ իսկ քարին եւ փայտին մէջ, որովհետեւ կրնանք զայն ի հարկին հանել անկէ, կը գտնենք նաեւ ջուրին մէջ, վասն զի հոն կը ծածկուի նուազագոյն հաղորդակցութեամբ, նոյն իսկ ենթադրողներ կան թէ ան՝ կրակը՝ անձերէի մէջ ծածկուած կ'իջնէ երկրի վրայ, բեղմնաւորելու տունկերն ու բոյսերը. վերջապէս շնչառութեան շոգին և կենդանական ջերմութիւնը կը յայտնեն անոր ներկայութիւնը մարդուն եւ կենդանիներու մարմինին մէջ: Կարելի չէ միթէ՞ ուրեմն հետեւցնել թէ կրակը էակներու եւ իրերու հասարակաց տարրն է:

Ասկէ աւելին կայ սակայն: Կրակը, այս հասարակաց տարրը, կ'ըսեն, սկիզբը, կենսական տարրը, այսինքն այն հոգին է զոր կը վերագրեն մարդուն: Արդեօք ջերմութիւնը չէ որ կ'ըսեն կողեւորէ ամէն իր. պարզ ու որոշ կերպով չերեւա՞ր արդեօք, անոր երեւիլն ու աներեւոյթանալը կեանքին հետ: Կարելի՞ է կասկածիլ թէ գրգռիչ հեղուկները մարդուն կ'ընձեռեն իր մարմնոյն կրակը: անոնք չե՞ն որ կը գրգռեն մեր իմացական և բնախօսական գործունէութիւնը, մի՞թէ կրակին միջոցաւ չէ որ կենդանի էակները կը պահպանուին սնունդ սպառելով, նաեւ այն առածը թէ կեանքի այրում մըն է պարզապէս, այդ ամէնը չե՞ն հաստատելու: Մարմինը հոդէն է, կենդանութիւնը հոգին է: Կ'ըսէր հին փիլիսոփայութիւնը, ըստ որում մարդը բաղկացուած է մըն է կաւի, ջուրի եւ կրակի: Արդէն ըստ զիցարանութեան կաւէ կոյտի մը մէջ, Արամազդէն գողցուած կրակի կայծ մը ներփչուելով ստեղծուած էր մարդը: Գնոստիկ-

եանց կարծիքով, մարդկային էակի բաղադրութեան մէջ կար երեք տեսակ կրակ, որոնք առանձինն առանձինն փոխ առնուած էին երկրային, երկնային եւ եթերային կրակներէն: Սլաւներուն, ինչպէս նաեւ Պարսկաստանի եւ Հնդկաստանի Արիականներուն համար հոգին կայծ մըն էր զոր մարդիկ երկինքի կրակովը հրահրած էին: Վայրենի եւ նոյն իսկ կէս—քաղաքակիրթ ժողովուրդներէն մէկ քանին, երբ երկւորեակներ ծնէին զանոնք կը համարէին իբր փայլակի տղաքներ, ուրիշներ կրակը իրենց նախնիքը կը համարէին, ճիշտ Հնդկներուն նման:

Ասոնցմէ զատ յայտնապէս վէտաներու մէջ հաստատուած է Ագնիի նոյնացումը կրակին հետ, ինչպէս նաեւ շարժման եւ խորհուրդին հետ: Վերջապէս Շրիկամորթներու կախարդները, անպատճառ, պիտի ըսեն իրենց հայրենակիցներուն թէ «գիտցէք որ ձեր հիւղակներու կրակը եւ ձեր մարմնոյն կրակը միեւնոյն բաներն են: Սովորական լեզուի մէջ ալ արդէն գործածուած «կենսատու կրակ»ը, «կեանքի կայծ»ը բառերը մեր երեւակայութեամբ այդ մերձեցումը կ'ապացուցանեն:

Հոգին՝ ճշմարտապէս կրակն է որ կը վերա՛ննդանանայ հետեւեալ բանաձեւին տակ, որ կ'ըսէ Ռիֆ վիեսա «ահա տեսէք արեգակին ճառագայթները որոնց միացած են մեր հայրերը:» Հռոմայեցիներուն համար վառարանի բոցերուն մէջէն կը շահապետէին թերափները, այսինքն նախնեաց հոգիները: Հերմէս եռամեծ ինչպէս և Պարսից Պունդէնիչը կը հաստատեն թէ մահէն յետոյ հոգին կերեւայ բոցի ձեւով, եւ Ս. Օգոստինոս կ'ըսէ թէ սուրբերու հոգիները երբ երկինք կը հասնին, արեգակէն աւելի փայլուն կ'ըլլան:

Յայտնի է թէ ինչպէս յաճախակի հոգիները կ'երեւան ժողովրդական աւանդութեանց մէջ հոսանուտ ասուպներու ձեւով: Այս գաղափարները իրենց արժէքը կորսնցուցած չեն: 1861ի հանդէս մը հրատարակած է յօդուած մը որով յօդուածագիրը կը ջանար հաստատել թէ մարդուն դիակը, ինչպէս և շատ մը առարկաներ, դուրս կուտան նուրբ եւ լուսաւոր նիւթ մը անկշռելի ազդակ մը որ կը վերարտադրէ մարմինին ձեւը, բայց այս երեւոյթը բացառապէս զգայուն բնութեամբ մը օժտեալ անձերու աչքին կը ներկայանայ:

Այս տեսութենէն առաջ կուգայ այն նմանեցումը որ կը գըտնուի կրակի արտադրութեան եւ ծննդագործութեան երեւոյթին միջև: Այս նմանեցումը աւելի որոշ կը տեսնուի Րիք վէտայի ինչ ինչ երգերուն մէջ:

Անգամ մը ընդունելէ յետոյ կրակի նոյնացումը էակներու և

իրերու կենդանարար սկզբունքին հետ, բնաւ դժուարութիւն չմնար հրային տարրը աշխարհի հոգին ընելու համար:

Հոս սակայն երկու ճամբայ կը բացուի մեր առջեւ, մին որ դէպի բազմաստուածութիւն կը տանի իսկ միւսը միաստուածութիւն: Պէտք է դուրս ելնել բազմաստուածութենէն:

Մէկուն համեմատ, այս աշխարհի հոգին աստուածային անձնաւորութեան մը, արարչի մը, գրեթէ արարչապետի մը նկարագիրը պիտի գգենու, որ պիտի ըլլայ միակ աստուածը գէթ աստուածներուն եւ մարդկանց տէրը: Վէտաները կը յայտարարեն թէ «Ագնին (Կրակն) բացած է երկինքն ու երկիրը, լուսաւորած է նախնական խաւարները, բռնադատած է արեգակն երկինք ելնելու, ստեղծած է ամէն թռչող, քալող, կեցող եւ շարժող բաները:» Եգիպտացոց մէջ Փսաֆ, կրակն կերպարար, ամէն բաները կանխած կը համարուէր, աստուածներն իրեն բերնէն ելած էին եւ մարդիկ իր աչքերէն: Փիւնիկեցիք, որ եօթը մեծ մոլորակային աստուածները կը պաշտէին, երկնային Ովկիանոսի մէջ ծածկուած տիեզերական կրակին անտեսանելի աստուածը եւսուսն գերագոյն գունդի մը մէջ կը դրնէին: Առ Բեբուցիս, սպանիական գրաւումէն յառաջ ստորերկրեայ կրակին ծեր աստուածը, Պանգսագամագ, աւելի աստիճան մը ունէր ինքաներու բոլոր աստուածութեանց վրայ. բնիկ աղօթք մը, առաւել կամ նուազ վաւերական, զայն կանուանէ «այն որ է ի սկզբանէ եւ պիտի տեւ մինչեւ ի կատարած»:

Կրակ աստուածը աւելի բարձր եղած է երբեմն եւ բռնած է զօրաւոր ձեռքով մը միաստուածութեան գաւազանը, Եհովայի և Որմիզդի հետ նոյն իսկ:

Եհովա եւ Որմիզդ ծագումով կը թուին ըլլալ աւելի կանուխ երկինքի աստուածներ քան տիեզերական կրակի աստուածները: Սակայն զրադաշտական գիրքերը կը նկարագրեն: «Ահուրամազդան տէրն ամենագէտ՝ իբր թէ մտքով՝ նման ճշմարտութեան, և մարմնով լոյսի:»

Գալով երբայական աստուծոյն, սա մանսւանդ տեսարաններով հրային է որ միշտ կը յայտնուի կրակէն ետքը «յաւիտենականին առջեւ», ան է որ կրակը կը զրկէ լափելու Ահարոնի ընծան (Ղեւ. Թ. 24) և բռնկցնել բուրվառի կրակը որ դուրս կը ժայթքեցնէ ընդունարանէն լափելու համար (Եւք. Ժ. 2) պաշտամանց նորոգողներ, ան է որ մորենին կը վառէ Մովսէսի առջեւ առանց փճացնելու, ան էր որ «ցերեկը» ամպէ սիւնով եւ գիշերը լուսեղէն սիւնով առաջնորդեց Իսրայելացիները անապա-

տին մէջ : Դանիէլ ալ Հինաւորցը կը տեսնէ բոցեղէն գահի վրայ նստած (Դան. Է. Գ.) :

Հնդկաստանի մէջ կրակի պաշտամունքը գրեթէ նպաստած է երկինքի պաշտամունքին չափ, պատրաստելու համաստուածութեան գաղափարին : « Աստուածային ոգի մը որ կը սաւառնի երկինքին մէջ, կ'ըսէ Պէրկաթամարի վերագրուած վետական երգ մը : Նմանապէս կը կոչուի ինտրա, Միթրա, Վարունա, Ագնի : Գիտունք միակ էակին կուտան մէկէ աւելի անուն, այսինքն Ագնի (կրակ), Յամա Լէն : » Իրաւացի է այս բանաձեւը յառաջ բերել իբրեւ ներողամտութեան եւ կրօնական համադրութեան արժանի դաս մը ամենականութեան թուականներու Բայց այդ բանաձեւին հեղինակներ թերեւս անոր մէջ կը տեսնէին միայն առիթ մը յայտարարելու կրակի նոյնութիւնը իրերու եւ էակներու առաջին տարրին հետ :

Գալով երկրորդ ճամբուն, որուն մէջ զարդացած է կրակի իմացումը իբր առաջին տարր տիեզերքի, պարտ էր նմանապէս յանգիլ համայնաստուածութեան : Յունական փիլիսոփայութեան համեմատ կրակը անձնաւորուեցաւ. փիլիսոփայութիւնը անկէ շինեց նուրբ եւ կենդանարար տարր մը որ կը թափանցէ ամէն բանի :

Հերակլիտ կրակին մէջ կը տեսնէր նախնական տարրը որուն յեղանակաւորումներն էին բոլոր էակները. ան կը բաղդատէ աշխարհը կրակի մը հետ, որ կը վառի եւ կը մարի կանոնաւորապէս : Ստոյիկեանները միեւնոյն տեսակէտը ընդունելով, կրակը իբր աշխարհի ոգի կը ներկայացնէին, եւ մասնաւոր հոգիները իբրեւ կայծեր որ անկէ կը ծագէին : Զենոն բնութիւնը սահմանեց « հանճարեղ հուր մը որ յառաջ կուգայ յօրինաւորապէս ծննդագործութենէն » : Պէտք չէ մոռնալ նաեւ որ Ստոյիկեան զպրոցը կը հաւատար թէ տիեզերքը կրակով կորսուելու սահմանեալ է, ոչ թէ միայն վերածնելու աւելի գեղեցիկ եւ աւելի մաքուր, ինչպէս կը կարծեն պարսկական եւ գերմանական աշխարհածնութիւնները, այլ նաեւ այնպէս ինչպէս կը սորվեցնէին Պրահմանները, անցնելու համար անորոշ շարքի մը մէջէն վերածնութեանց եւ ջրնման փոխակերպութեան :

Կ'արժէ հոս մէջ բերել այն տեսութիւնը զոր Էմիլ Պուրնուֆ ներկայացուցած է Գիսուքիւն կրօնից անուն գործին մէջ, Ագնիի (կրակ) կողմէ ներկայացուած դերին կարեւորութեան առջեւ, Պրահմանակութեան եւ բնազանցական յեղաշրջութեան մէջ : Հանճարեղ մատենագիրը մինչեւ իսկ ընդունած է կրակի շարժման նոյնութիւնը կեանքին եւ խորհրդածութեան հետ, եւ հաստատած է հիմնական եւ սկզբնատիպ վարդապետութեանց նոյնութիւնը

հնդեւրոպական բոլոր կրօններու, ի միասին իմանալով նաև քրիստոնէութիւնը: «Քրիստոս ուրիշ բան չէր, կ'ըսէր Գիսուքիւն կրօնիցի հեղինակը, բայց եթէ Վետական Ագնին, եւ թէ չկայ Քրիստոնէական կրօնի էական վարդապետութիւն մը որ չգտնուի Վետաներու մէջ, ինչպէս երրորդութեան վարդապետութիւնը. որ ներկայացուած է Արեւի, կրակի եւ հովի ձեւին տակ: Արեւը նկատելով, արտադրող հայր, Կրակը կամ Ագնին՝ որդին, եւ Հովը Վանուշունչը, օգը շարժման մէջ, այսինքն հոգին, հոգեղէնը:

«Ագնին (կրակը) իբր մայր ունի Մանա, այսինքն է այն վայրը ուր ինքն ի գոյ եկաւ, եւ իբր հայր՝ հիւսնը Դրվաեդրի որ կը շինէ փայտն ուրկէ կրակը կը հանեն: Վետական գոհին մէջ, չըփմամբ արտադրեալ կայծը որ հազիսթա (նորածին) կը կոչուի, յարդին վրայ կը տանին, իր քովը դնելով կովերու արտադրութիւնը (կաթ եւ կարագ): Ասոնք ըլլալէն վերջ գոհը կը տարուի դէպի բազին ուր քուրմը կը թափէ աստուածեղէն մանկան վրայ նուիրական հեղուկը, Սոմաի այս վայրկեանէն սկսեալ Ագնի է օծեալը (ագթա): Հանդիսականները հեղուկին մնացեալ մասը իրենց մէջ կը բաժնեն, ինչպէս նաև կրակին ընծայուած բաղարջներուն մէկ մասը:

Սորհրդաւոր հաղորդութիւնն է այս, ուր Ագնի, ընծայման մէջ պարունակեալ նւթական երեւոյթներու տակ, ինքնին իբր գոհ կը ներկայանայ:

Այս այն տեսական վարդապետութիւնն է զոր Հրեաներէն մաս մը տարաւ Բաբելոնէն որ ընդունած էր անշուշտ Պարսիկներէն: Յիսուս ալ արդէն անկէ զատ ուրիշ բան մը չսովբեցուց. միայն իր մահուանէ յետոյ, առասպելը պիտի գար Ագնիին հետ նոյնացնել զինքը: — Այս պատճառաւ արդէն քրիստոնէութիւնը արիական ժողովրդոց մէջ արագ զարգացում գտաւ, որովհետեւ հոն ասոնք տեսան պարզադէս իրենց նախնեաց վարդապետութիւնը: Աւելին կայ. այսօր նոյն իսկ այս վարդապետութիւնը կ'ընծայէ այն գետինը որուն վրայ կրօնքը պիտի հաշտուի գիտութեան հետ, որովհետեւ այս վերջինը կը միտի հռչակելու, շարժման, կեանքի եւ խորհրդածութեան նոյնութիւնը: »

Այս ենթադրութիւնը կամ թուիք խիստ հրապուրիչ է, անխրաւ պիտի ըլլար չընդունիլ Պիւրնուֆի արժանիքը ցուցադրած ըլլալուն համար զայն տաղանդէ աւելի գիտական կալուածով մը: Դժբաղդաբար սակայն չգիմանար իրողութեանց քննութեան ազդակին հանդէս:

Մեծ հաւանականութեամբ մը կարելի չէ ենթադրել որ Ագնիի համայնաստուածեան վարդապետութիւնը յառաջագոյն ըլլայ


Հնդկաց եւ Պարսից բաժաննովէն, քանի որ Վէտաներն իսկ, ինչ որ որոշ կերպով հաստատուած է՝ այս հերձուածէն յետնագոյն են: Պարսիկներն ուրեմն չ'էին կրնար զայն հաղորդել Եփրայեցւոց. գալով Յիսուսի, ոչ ոք կը հաստատէ թէ զայն ուսուցած է. հակառակը պնդելու մեծ հաւանականութենէն աւելի վաւերական ապացոյցներ ունինք: Պիւրնուֆ կ'ենթադրէ թէ « Յիսուս երկու վարդապետութիւն ունեցաւ, մին առականերու շղթայումէն ելած վարդապետութիւնն էր որոնց ինք այնքան վարժէր, միւսը խորհուրդի վարդապետութիւնը որ աշակերտներուն միայն տուաւ, այն ալ ոչ թէ ամենուն իր ամբողջութեամբ, այլ միայն Պետրոսի, Յակոբի եւ Յովհաննոս: Այս գաղտնի վարդապետութիւնը հետզհետէ յայտնուեցաւ Եկեղեցւոյն կողմէ, ժամանակներու ընթացքին մէջ. բայց Քրիստոնէական բուն վարդապետութիւնը կը գտնուէր այն խորհրդածութիւններուն մէջ զորս Քրիստոս կ'ընէր երբեմն, եւ որոցմէ շատերը անոր մտքին մէջ պահուած մնացին:»

Պէտք է արդեօք դիտել տալ թէ ասոնք պարզապէս ճշի ենթադրութիւններ են եւ նոյն իսկ բացարձակապէս հակասուած, քրիստոնէական վարդապետութեանց պատմութեան կողմէ: Անշուշտ կան քանի մը նմանութիւններ քրիստոնէական եկեղեցւոյ քանի մը ծէսերուն եւ նախնեաց կրակի եւ արեւի պաշտամունքին միջև, ինչպէս զանոնք կը գտնենք նաեւ Հռովմայեցւոց, Յունաց, Պարսից, դրեթէ Հնդկաց մէջ: Պիւրնուֆի կողմէ այս իրողութեան եւ նմանութեան հաստատուիլն ալ նոյն իսկ իրեն արժանիք մը կը չինէ քանի որ ան նոր եւ դրաւական փաստեր կը գործածէ որոնք փոխ առնուած են թէ՛ գետնադամբաններէ ձեւացած յիշատակաբաններէն, թէ՛ հին ծիսարաններէ եւ նոյն իսկ ժամանակաից կըրօնական արարողութիւններէն, որոնց քրիստոնէական ծէսերու հետ խառնուելովը այնքան բացատրութեանց կարօտ չ'են ըլլար: Յիսուս բարոյագէտ մը եւ միսթիքական մըն էր, ոչ թէ գիտուն մը, եւ ասոր համար միայն յաջողեցաւ կազմել կրօնք մը: Եթէ բնազանցական Պրահմանի ազդեցութիւնը ներգործած է քրիստոնէական աստուածաբանութեան վրայ, այն ալ աղեքսանդրեան փիլիսոփայութեան միջնորդութեամբ կրնար ըլլալ եւ ոչ թէ Քրիստոսի:

Այս կերպով երբ մէկ կողմէ կը պնդենք թէ պէտք չ'է քրիստոնէութիւնը բացատրելու համար Վեսաներուն դիմել, հաւասարապէս կրնանք նաեւ պնդել թէ պէտք չ'է նաեւ վեսաներու դիմել բացատրելու համար Նորապաղատոնական նախնական տարրին հրային ընթերցան մասին առաջադրած գաղափարները, քանի որ անոնց նոյնութիւնը այնքան բացորոշ է:

Թարգմ. ՍԱԻՐԷՆ-ՍԻՐԱՔ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՓՐԱԿԱՆՈՒԹԵՆԷՆ



ՈՒՐՈՒԱԿԱՆ ՓԵՍԸՑՈՒՆ

(ՎԻՊԱԿ՝ ԱՍՊԵՏԱԿԱՆ ԳԱՐՈՒ ԿԵԱՆՔԷՆ)

Օտէնվալտի լեռներէն մէկուն գագաթին վրայ, որ Վերին Գերմանիոյ մէջ անշէն և նկարագեղ երկիր մըն է, Հռենոսի եւ Մայնի գետախառնունքէն ոչ շատ հեռու, բազմաթիւ տարիներ առաջ Պառօն Ֆօն Լանտշուդի գղեակը կանգուն կը մնար: Հիմա, բոլորովին քայքայուած է ան գրեթէ և թաղուած՝ փեկոններու և եղեւիններու մէջ. այլ սակայն իր աւերակներուն վրայ տակաւին կանգուն կեցած է վաղեմի դիտանոցը, որ իր նախկին տիրոջը պէս վէստութեամբ մը կը նայի չրջակայ երկիրներուն վրայ:

Պառօնը, Բաձենելլէնպօկըն մեծ գերդաստանին մէկ աննշան գիւղէն ըլլալով, ժառանգած էր իր նախահայրերուն հարստութեան բեկորները, անոնց հպարտ բնաւորութեան հետ:

Թէպէտ պապենական պատերազմասէր բնաւորութիւնը խիստ շատ փնասած էր իրենց ընտանեկան ստացուածներուն, բայց դարձեալ Պառօնը ջանք չէր խնայեր իրենց նախնի փառքը անսասան պահելու համար: Ժամանակները խաղաղ էին, և գերման ազնուականները, մեծ մասամբ լքելով իրենց անպատշաճ հին գղեակներ, որոնք արծիւի բոյներու պէս լեռներու վրայ թառած էին, ձորերու մէջ աւելի յարմար բնակարաններ շինած էին: Այլ ասոնց հակառակ, Պառօնը՝ հպարտ՝ իր փոքրիկ գղեակին մէջ կը բնակէր առանձնացած եւ ամէնէն մօտ դրկիցներուն հետ անգամ չէր տեսակցէր:

Պառօնը մէկ հատիկ զաւակ մը ունէր, աղջիկ մը. բայց բնութիւնը, երբ հատ մը միայն կը պարգեւէ, սքանչելիք մը կ'ընէ զայն, իբր տրիտուր. ահա ասոնցմէ էր նաեւ Պառօնին աղջիկը: Բոլոր մամիկները, վհուկները և կախարդները կը վստահացնէին հայրը որ ան, բովանդակ Գերմանիոյ մէջ իր գեղեցկութեան մրցակիցները չունէր, ու ո՞վ անոնցմէ աղէկ կրնար

գիտնալ: Ասկէ զատ, աղջիկը մեծ խնամքով մեծցուած էր վերին հսկողութեանը տակ երկու ամուրի մօրաքոյրերու, որոնք իրենց աղջիկնութիւնը անցուցած էին Գերման պզտիկ արքունիքներէն մէկուն մէջ, եւ որոնք խիստ լաւ գիտէին գեղեցիկ օրիորդ մը դաստիարակելու համար պէտք եղած ամէն ինչ: Անոնց կրթութեամբը, անիկա սքանչելիք մը եղաւ կատարելութեանց: Տասն եւ ութ գարուններ այն ինչ բոլորած այդ աղջիկը, ձեզի սխրանք պատճառելու աստիճան գեղեցիկ կ'ստեղծագործէր. եւ սրահակներ կը նկարէր սուրբերու պատկերներով, անոնց դիմագիծին այնպիսի արտայայտիչ զօրութիւն մը տալով որ, քաւարանին մէջ անհամար հոգիներ ըլլային անոնք, գոգցես:

Կը կարդար առանց մեծ դժուարութեան. եկեղեցական վկայաբանութիւններ եւ Հէլտէնպուքի ասպետական հրաշալիքները: Մինչեւ իսկ գրելու մէջ մեծ վարժութիւն ունէր առանց գիր մը սխալելու իր անունը կրնար ստորագրել, ու այնքան ընթեռնելի կերպով մը որ, մօրաքոյրերը առանց ակնոցի կրնային կարդալ: Բայց ան, կը գերազանցէր մանաւանդ անուշ եւ սիրուն կատակաբանութիւններուն մէջ, օրուան ամէնէն դժուար պարերուն վարժ էր. կիթառի եւ տաւիղի վրայ շատ մը եղանակներ կը զարնէր, ու Միննէոլիյտըրսի բոլոր գողտրիկ գեղոնները գոց գիտէր:

Իր մօրաքոյրերն ալ, իրենց աղջիկնութեան օրերուն մէջ, երեւելի պշտուհիներ եղած ըլլալով, սքանչելի կերպով յարմարած էին իրենց քեռաղջկանը վարքին աչալուրժ հսկողները եւ անաչառ քննիչները ըլլալու, եւ այս, սա պատճառով որ, տարէց պշտուհիէ մը աւելի խոհեմ ու աւելի յարմարագոյն մէկը չըլլար, իբր հսկող մանկամարդ օրիորդի մը վրայ:

Շատ քիչ անգամ ան կը հեռանար անոնց տեսութենէն, բնաւ դղեակին սահմանէն չէր ելլեր դուրս, մինչեւ որ իրեն չընկերանային, կամ աւելի զինքը չի հսկէին. շարունակ, բանախօսութիւններ կը տրուէին իրեն, խիստ բարեվայելչութեան եւ բացարձակ հնազանդութեան վրայ, ու, գալով մարդոց — պա՛հ — անոր սորվեցուցած էին այնչափ հեռուէն եւ ա՛յն աստիճան կասկածով նայիլ անոնց որ, բացի պատշաճապէս արտօնուած ատենը, հայեացք մը տեղամ չը պիտի նետեր ան աշխարհի ամենէն վայելուչ ասպետին վրայ — ոչ, նոյն իսկ եթէ մեռնէր իր ոտքերուն տակ:

Զարմանալի էր, որ այս դրութեան յաջող արդիւնքը ակներեւ էր, օրիորդը՝ տիպար մըն էր արդարութեան ու հնազանդութեան: Մինչ ուրիշներ կը վատնելով իրենց հրապոյրը աշխարհի

հեշտութեանց մէջ նշաւակ եղած էին ամենէն փետտուելու և մէկ-դի նետուելու, ան. պահապան փուշերու մէջտեղ փթթտող վարդի կոկոնի պէս անվթար, կը ծաղկէր թարմ ու սիրուն կնութեան մէջ, այն անբիծ մանկուհիներուն պաշտպանութեանը տակ: Իր մօրաքոյրները զինքը կը դիտէին հպարտութեամբ եւ խնծիղով, ու կը պարծենային որ թէպէտ բոլոր աղջիկները կրնային մոլորել, բայց դարձեալ Քաճենելլէնպօկէնի ժառանգորդուհւոյն այդպէս բան մը չը պիտի պատահէր, նախախնամութեան շնորհիւ:

Պարոն Վօն Լանտօրթ որչափ որ հարուստ չէր զաւակներու մասին, իր ընտանիքը բնա՛ւ երբէք սակաւաթիւ չէր, որովհետեւ նախախնամութիւնը, աղքատ ազգականներու մեծ թիւ մը պարգեւած էր իրեն, եւ որոնք հաւասարապէս գորովագութ բնաւորութիւն մը ունէին, բոլոր աղքատ ազգականներու պէս: Անոնք, զարմանալի կերպով, յարած էին Պառօնին, ու առիթ չէին փախցընէր բնաւ հոյլ ի հոյլ գալով դղեակը շէնցնելու: Այս բարի մարդիկը ընտանեկան կոշուքներ կը սարքէին, ի հաշիւ Պառօնին, ու երբ անգամ մը կշտացած առատ կերակուրներով, ալ կը յայտարարէին որ աշխարհի վրայ չկար բան մը այնքան բերկրառիթ, որքան ընտանեկան այս հաւաքումները եւ ցնծալից այս ժամանցները:

Պառօնը, թէպէտ կարճահասակն այլ մեծահոգի մարդ մըն էր ու իր շուրջի փոքրիկ աշխարհին ամենէն մեծ մարդը բլլալուն գիտակցութեանը հաճոյքովը կը հպարտանար: Ան կը սիրէր պատմել երկար պատմութիւնները այն հին կտրիճ զօրականներուն, որոնց կենդանագիրները խոժոռ մը կը նուա՛ն պատերուն վրայէն, շուրջանակի. եւ ինք չէր կրնար գտնել ունկնդիրներ, որոնք հաւասարէին իր ծախքովը կերակրուողներուն: Հրաշալիքներու ետեւէն էր միշտ, ու ջերմ հաւատացող մըն էր բոլոր այն գերմարդկային առասպելներուն, որոնցմով բովանդակ Գերմանիոյ լեռներն ալ, ձորերն ալ կը գեղուն:

Հիւրերուն հաւատքը նոյն իսկ իրը կը գերազանցէր, անոնք ապահար մտիկ կ'ընէին իր բոլոր պատմութեանց ու երբէք չէր պատահէր որ չի հիանային, թէպէտ հարիւրերորդ անգամը ըլլար իրենց պատմութեան հրաշալիքը: Ահա այսպէս կեանք մը կ'անցունէր Պառօն Վօն Լանտօրթ, իր կոչնականներուն պատգամախօսը, իր պզտիկ կալուածին բացարձակ տէրը, ու երջանիկ, մասնաւորաբար այն համոզումը ունենալուն համար թէ ինք այդ ժամանակին ամենէն խելացի մարդն էր:

Մեր պատմութեան ականարկած ատեն, դղեակին մէջ, խիստ կարեւոր գործի մը համար, ընտանեկան հաւաքոյթ մը կար.

Պառոնին աղջկանը սահմանուած փեսացուն ընդունելու համար էր ան: Պաժիէրացի ծերուկ ազնուականի մը ու Պառոնին մէջտեղ բանակցութիւն մը կատարուած էր, իրենց գերդաստանները խնամութեամբ իրար միացնելու, իրենց զաւակներուն ամուսնութեամբ: Առաջին քայլերը առնուած էին մեծ փոյթով: Երկու երիտասարդները, առանց զիրար տեսնելու, նշանուած էին, ու հարսանեկան արարողութեանց ժամանակը որոշուած էր:

Նորատի կոմս Ֆօն Ալթէնպուրկ բանակէն ետ կանչուած էր այդ խնդրին համար, եւ արդէն ճամբայ ելած էր գէպի Պառոնին դղեակը, ընդունելու համար իր նշանածը: Նոյն իսկ նամակներ ստացուած էին իրմէ, Ուրիպուրկ քաղաքէն, ուր պատահաբար յապաղած էր, — որոնք կը նշանակէին այն օրը եւ ժամը, որ ատեն կարենալ հասնիլ կը յուսար:

Դղեակը, արժանաւայել ընդունելութիւն մը ընելու համար պատրաստութեանց եւ մեծ իրարանցումի մէջ էր: Գեղանի հարսնացուն անսովոր խնամքով մը պճնած էին: Երկու մօրաքոյրերը հսկած էին արդուզարդին, ու կուած ալ էին ամբողջ առտուն, անոր հագուստին ամէն մէկ կտորին վրայ: Օրիորդը օգուտ քաղելով անոնց հակառակութենէն, առիթը գտած էր հետեւելու ի'ր ճաշակին ձգտումներուն, և բարեբախտաբար պատուական ճաշակ մըն էր ան: Աղջիկը ա'յնքան սիրուն էր, որքան երիտասարդ փեսացու մը կարող էր ցանկալ. ու սպասումի յուզմունքը աւելի կը շատցնէր անոր գեղափայլ հմայքը: Դէմքն ու վիզը ծածկող կարմրութիւնները, կուրծքին մեղմիկ ելեւէջը, մերթ ընդ մերթ երազանքներու մէջ կորսուող նայուածքները ասոնք բոլոր կը մատնէին այն թեթեւ յոյզը որ տեղի կ'ունենար անոր մանրիկ սրտին մէջ: Մօրաքոյրերը միշտ կը պատկէին իր շուրջը, որովհետեւ ամուրի մօրաքոյրերը, այսպիսի խնդիրներու մէջ շահագրգռուելու հակամէտ են: Անոնք, բազմաթիւ չուրջ խրատներ կուտային, թէ ի'նչպէս պէտք էր վարուիլ, թէ ինչ հարկ էր ընել, և թէ ի'նչ ձեւով պէտք էր ընդունիլ ակնկալուած սիրահարը:

Պառօնն ալ հաւասարապէս զբաղած էր պատրաստութիւններով: Ծշմարիտը խօսելով, ընելիք գործ մը շունէր իրապէս, բայց ան, բնականէն բարկացոտ, աղմկարար պզտիկ մարդ մըն էր, ու չէր կարող անգործ մնալ մինչ բոլորը աճապարանքի եւ գործի մէջ էին: Խիստ տնճնակալի կերպարանքով մը դղեակը վերէ վար կը յուզէր. սպասաւորները ամէն ատեն կը կանչէր իրենց գործէն, խրատելու համար որ փութկոտ ըլլան. եւ կը բզզար իւրաքանչիւր սրահի և սենեակի շուրջը արագօրէն, մշտաշարժ, գլուխ ցաւցնող եղանակով մը, որքան ճճի մը, ամառնային տաք օդին մէջ:

Միեւնոյն ժամանակ ամէն պատրաստութիւն տեսնուած էր. անտառները թնդացեր էին որսորդներուն աղապակներէն. խոհանոցին մէջ այլազան կերակուրներ եփուած էին. մառանները Հռենոսի և Ֆէռնի գինիի ովկէանոսներու էին փոխուած ու Հայտէլայէրկի վիթխարի կարասն իսկ իր բաժինն առած էր: Ամէն ինչ պատրաստ էր ընդունելու համար հռչակուող այցելուն, չորնդալից ցնծութեամբ և գերման ասպնջականութեան ճշմարիտ ոգւովը: Բայց հիւրը կ'ուշանար: Ժամերը կը սահէին իրարու ետեւէ, Արեգակը, որ իր ժառագայթները վերէն վար արձակած էր Օտէնվալտի շքեղ անտառներուն վրայ, լեռներուն կատարներուն վրայ կը շողշողար հիմա: Պառօնը ամէնէն մեծ աշտարակին վրայ բարձրացած, իր աչքերը հորիզոնին վրայ յառեր էր, կոմսնու իր հետետորդները հեռուէն նշմարելու յոյսով:

Անգամ մը կարծեց թէ տեսաւ գանոնք. փողերուն հնչիւնները ձորերն ի վեր կուգային, լեռներուն արձագանքներէն երկնցած, Հեռուէն խումբ մը ձիաւորներ տեսնուեցան, որոնք դանդաղօրէն կը յառաջանային ճամբուն վրայէն, բայց այն ինչ լեւրան խաւրիսին հասած, յանկարծ տարբեր ուղղութիւն մը առին: Արեւին յետին ճառագայթները մարեցան. ջղջիկները թռչտիլ սկսան վերջալոյսին մէջ. ճամբան հետզհետէ մթազնեցաւ ու կենդանութեան ոչ մէկ նշան կերելէր անոր վրայ, բաց ի մէկ կամ երկու գիւղացիներէ, որոնք դուրսերնէն տուն կը դառնային յուրօրէն:

Թարգմ. Բ.

ՈՅՇԻՆԿԴԸՆ ԻՐՎԻՆԿ
(Շարունակելի)

ՊԱՇՏՈՆԵԱՅՆԵՐՈՒ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ. — 25էն 500 ոսկիի տարեկանով պաշտօնեայ կը հայքայթէ դիմել...

Բարեկամներէս մէկը պաշտօնեայի մը պէտք ունենալով այս հասցէին կը դիմէ. ինքզուի խանութ մը ուր թափթփած հագուստներով մարդ մը կեցեր է:

— Գործակալութեան տնօրէնը տեսնել կ'ուզեմ:

— Ես եմ, կը պատասխանէ խանութին մէջ նստողը:

— Պարոն, տարին 35 ոսկինոց պաշտօնեայի մը վրայ է խընդերը:

— Հինգ դահեկան արձանագրութեան տուրք վճարեցէք եւ քանի մը օրէն նորէն եկէք. մինչեւ այն ատեն ձեզի պաշտօն մը կը ճարեմ:

— Բայց պարոն, ես պաշտօնեայ կ'ուզեմ եւ ոչ թէ նոր պաշտօն մը:

— Անանկ է նէ ես կուգամ, կը պատասխանէ գործակալութեան տնօրէնը եւ խանութը գոցելով մեր բարեկամին ետեւէն կ'երթայ:

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ ... ՌԵՔԼԱՄՈՎ

« Քսանեուրը տարու Վիեննացի մը, որ
 « Հրեայ պատուաւոր բնականի մը կը պատկանի,
 « բաղդին հարուածներուն ենթարկուած, միջահա-
 « սակ, չարատե կազմով, անադարտ անունով,
 « առանց դատական անցեալի, կը փափաքէ ա-
 « մուսնանալ պատուաւոր կնոջ մը հետ, առանց
 « կրօնի խտրութեան, որ պիտի փրկէ զայն սաս-
 « տիկ հոգեւէ, քանի մը հազար ֆրանք օժիտ բե-
 « ռելով: Տրամադիր է անմիջապէս եգիպտոս մեկ-
 « նիլ: Կը խնդրուի ապահովագրեալ նամակով
 « դիմել քերթիս քղթակից Ռիւար Սալթերի, որ
 « հանդիպատարութեամբ հաւանած է ընդունիլ
 « քղթակցութիւնները: Հասցէ՝

ՐԻՇԱՐ ՍԱԼԹԵՐ, Վիեննա (Աւստրիա) ԷՏՄՕՆ անունով

(ՄՕՆԻԹԵՐ)

Այլանդակութիւններու դարուն մէջ ենք հաւատացէ՛ք:

Աճեցէ՛ք եւ բազմացարութի... տեսակները շատնալ սկսան,
 ամէն ճաշակի, ամէն տարիքի յարմարելով:

Արդէն գիտենք փոխանորդութեամբ ամուսնութիւնները, հե-
 աճայնով ամուսնութիւնները, վիճակահանութեամբ ամուսնու-
 թիւնները, ալ ի՞նչ գիտնամ: Բայց մինչեւ հիմայ չէք գիտեր
 եւ ոչ իսկ կրնայիք գուշակել թէ Յամի Տեառն Յիսուսի Քրիստոսի
 1903, մէկը, Աւստրիացի Հրեայ երիտասարդ մը, իր գլուխը՝
 օրիորդի մը գլխուն հետ կապել տալու համար, պիտի դիմէր
 թերթի մը խմբագրութեանը, իրեն կին մը փնտռելու ազդը,
 թերթին չորրորդ երեսը հրատարակելու համար:

Հիմէնեան կապը... վաճառականական, մանիֆարթուրաճիի
 հաշիւ պարզապէս:

Խնդրանք եւ մատուցում, պատմաճի կարապետ չհտի՞ր:

Գանիլը... կուղայ մարդուս:

Ուր տեղերէ ուր իջեցուցին... Ամուսնական պատուիրանը:

Թերթին չորրորդ երեսը, ազդարարութեան միջոցաւ կոյս
 կեանքերու միացումը ռէքլամ ընել, ընդմէջ աղէկապի պատկերի

մը եւ միջատասպան փոշիի մը ծանուցման որ շիտակը ստամոքսի աղէկ աւրուածութիւն մը կը յատկանշէ :

Մեծ մաշրս տասնեւվեց անգամ երեսը, խաչակնքեց, այս լուրը իրեն կարդալովս և խեղճ կիւնը իրաւունք ունէր... խաչ հանելու, քանի որ հին բարի ժամանակները խեղճերը խաչը կ'ելլան եղեր. իրենց ապագայ կէսին երեսը տեսնելու համար :

Ամէն նորութիւն Ամերիկայէն, ամէն բառերու և Պատրիարքներու ստուգարանութիւն եւ կենսագրական իշխազեանէն, ամէն ազւոր գինիներ Պորտոյէն եւ . . . Գարթալէն չէ՛ որ կուգան :

Տեսէ՛ք, սա՛ Աւստրիացի հրեայ երիտասարդը որ օր մը՝ իր կեանքին ապագայ ուղիին վրայ ակնարկ մը նետելով, շատ գէշ կը գտնէ զայն ու կ'որոշէ ամուսնանալ ոէքլամով :

Նորութեան ըսելիք չիկայ և կ'արժէ գրական մրցանակ մը զորօրինակ իզմիրեանցին պէս :

Մարդը մտածեր է վերջապէս եւ կրցեր է երես ելլալիք գիւտ մը ընել :

Որովհետեւ, ամէն ստամոքսի գործ չէ շիտակը աղէկապի ազդի մը քովիկը ամուսնութեան ոէքլամ մը պահկեցնել. . . կերակուր եփող եւ անկողին պատրաստող կնիկ մը ունենալու համար :

Նա՛, քիչէն քիչ սա՛ չափ ստամոքս ունենալու է մարդ կամ ահագին toupet :

Ահա՛ մարդ մը որ ինքզինքին համար կը վկայէ թէ պատուաւոր ընտանիքի կը պատկանի, բազդին հարուածներուն ենթարկուած եւ չարքաշ է կազմով, անաղարտ է անունով, եւ . . . փափաքող է ամուսնանալ պատուաւոր կնոջ մը հետ, առանց կրօնքի խտրութեան . . . քանի որ զինքը պիտի փրկէ սաստիկ հոգերէ :

Ասա է. մարդը զրամով աղջիկ կը փնտռէ . . . չփնտռելով այն յատկութիւնները որոնք աղջկան մը վրայ կը փնտռեն :

Ազդը ինքնին տգեղութիւն կը հոտի : Չունի այն առինքնող յատկութիւնը որ կը փնտռուի կնոջ մը վրայ ընդհանրապէս եւ ազգերու մէջ . . . սանկ մասնատորապէս :

Ժամանակները, ազգերը, կիները եւ Աւստրիացի հրեայ երիտասարդները կը փոխուին . . . մեր վարժարաններու դասատուներուն պէս շուտ շուտ :

Հեռու չէ այն օրը երբ պիտի ողջունենք արեգակին հակառակ կողմէն ծնիլը, Ննովք Արմէնիին վարժապետութիւն ընելը, Բրիզանթէմին . . . վարդապետ ըլլալը եւ կիներուն . . . ազդով էրիկ փնտռելը :

Կիները պիտի շատնան . . . այս տարուան սեխերուն ու ձմերուկներուն չափ եւ ամուսնացու էրիկմարդիկ պիտի նուազին ,

հաղուադիւտ պիտի դառնան... երես ելլալիք յօդուածի մը չափ : Ամէն բան պիտի ընեն խեղճ կնիկները... էրիկ մը ճարեւու համար, հոս հոն պիտի վազեն :

Ձեռքերնուն եկածը պիտի ընեն էրիկի պէս բան մը ձեռք ձեռքէն համար և մինչև իսկ պիտի դիմեն խմբագրապետներու :

Եւ միւս օր սա տեսակ ազդ մը պիտի կարդանք թերթերուն չորրորդ երեսը, ճիշդ քովը Մոռիւ ձկան իւզի ազդին, որ կը ներկայացնէ մարդ մը ահագին ձուկ մը կոնակը առած եւ միւս քովը կորսուած կնոջ մը ազդը որ ջլախտաւոր է, սեւեր հագած է եւ անցած երկուշաբթիէն ի վեր անյայտ եղած է իր տունէն :

« Երիտառարդ կին, աղւոր, հմայիչ աչքերով, սեւ սաթին ման մագերով, փղոսկրէ ակոսնիրով, դերասանուհիները կատղեցնելու աստիճան ձերմակ ձեռքերով, բարեձեւ հասակով, կը հանգրիճուի և կը քալէ այնպէս ինչպէս պիտի փափաքէր Բրիզանթէմի Պատուաւոր ընտանիքէ : Հազիւ մէկ երկու հեղ գրացիի տղուն հետ սիրաբանած... քիչերուան ժամը երեքէն ետք վարժուհիի պաշտօններ վարած է ազգ. երկսեռ վարժարաններուն մէջ, վկայուած Ուսմ. Խորհուրդէն : Անունն է Էլիզ տարիքը հազիւ... բայց, մոռցած է գրել... ներդրութիւն : Նիւթական կարողութիւն... գրականին չափ է : Կարդացած է շատ մը վէպեր, բայց ամենէ շատ սիրածը Զոլայի բոլոր վէպերուն հաւաքածոն է : Այս ամէն առաւելութիւններով օժտուած ազջիկը գտնալու համար փափաքողները կրնան դիմել Օր. Էլիզի, հասցէ S. N. Péra : Դիմեցէ՛ք և գոհ պիտի մնաք :

1—10

Այո՛, ազդը պիտի վերջացնեն « դիմեցէ՛ք եւ գոհ պիտի մընաքով » իրը թէ Բէյնիրճեան եղբայրներուն պանիրը ըլլար :

Ես իմ մասիս շիտակը, երբ այդ հասցէով ազդին տիրոջը դիմեմ, երբ աչքերովս տեսնամ այդ կինը, ապահովաբար գանելիք պիտի գալ վրաս, հակառակ անոնց պաշտպան փաստաբաններէն մին ըլլալուս :

Կին ըսածդ անմատչելի ըլլալու է Ծաղիկի թերթերուն պէս ? և աժաննալու չէ Ադամախնձորի օխան... : Իր բարձրութեանը մէջ պահենք զինքը և վար առնելու համար նախ ձեռքերնիս լուանք :

Տէրը այսպէս ըսած է Մատթ. ԼԲ. գլխուն մէջ, եւ անկէց առաջ Սողոմոնի գիրքը ստեղծուած էր յարգել տալու համար այդ պատուիրանը :

Կին իմաստուն, կին խոհական, կին ժրագլուխ... պսակ է առն իւրոյ, ըսած է Դաւիթ մարգարէ :

Բայց սխալ է ատիկա, գէթ այսօր, մեզի համար, երբ կին անհաւատարիմ, կին անխոհեմ, կին շռայլ, կին անյագութեւն... պսակ բոլորէ շուրջ զգլխով առն իւրոյ:

Commenditaireները շատցած են. . . ըստ վկայութեան Բրիզանթէմի եւ սոխ-հաց ուտող աղջիկներէն հազիւ մէկ երկու հատ տեսած եմ Ենի գարուի եւ Գուլ գարուի անկիւնները, ասոնք ալ սոխ հացէն վերջ Սէն-Սէն կը գործածեն:

Սոխ հաց եւ Սէն-Սէնը. հեռաւորութիւնը քիչ մը շատ չէ՛ք գտնար:

Բայց ի՞նչ ընենք որ իրողութիւն է ասիկա եւ բնական հետեւութիւնը սոխ հացին եւ թերթերու միջոցաւ էրիկ կնիկ փնտռելուն:

ԲԱՆԱԳՈՂ ԼՈՒՈՒԹԻՆԵԱՆ



ՄԱՐԴ ԾԱՆՁՆԱՐԱՐԵԼՈՒ ՆՈՐ ԵՂԱՆԱԿ ՄԸ

— Կ'աղաչեմ, կրնա՞ք ըսել ինձ թէ ի՞նչ տեսակ մարդ է սա ձեր դրացին:

— Աղէկ մարդ է. բայց կ'աղաչեմ ինձի մի՛ հարցունէր:

— Խօսքին կը հաւտացուի՞:

— Կը հաւտացուի, բայց մի՛ ստիպեր զիս որ խօսիմ անոր վրայ:

— Վստահելի է, բայց պատասխանատուութիւն չեմ՝ առնել վրաս:

— Ինչո՞ւ:

— Խօսիլ մի՛ տար զիս:

— Խաբեբայ է:

— Ես մարդ աւրելու բնութիւն չունիմ. ինչո՞ւս պէտք. ինչուս պէտք ըսի ես. բարի մարդ է:

— Հետը գործ կրնա՞մ ընել:

— Ձեր գիտնալու բանն է. թող որ եթէ բարեկամս չըլլար ալ՝ ես սովորութիւն չունիմ մարդու ետեւէ խօսելու: Անոր ըրածները բոլոր աշխարհ գիտէ արդէն: Քանի՛ քանի հոգիներու հետ ընկեր եղաւ ու վնաս տուաւ: Բայց ինչո՞ւս պէտք. աղէկ մարդ է:

— Ըսել է որ զգուշանամ:

— Քուկին գործդ դուն գիտես, աղբար, աղ մարդուն ստակ տուիր մի', խերը տես, ալ չես կրնար ետ առնել. ինձմէ իմացած մի' ըլլար սակայն: Ձեմ ուզեր ես մարդ արել, ես չ'էի ըսերը բարի մարդ է, բարի:

— Ընկեր ըլլա՞մ հետը, ի՛նչ կ'ըսես:

— Դուն գիտես, դրամներդ եթէ կորսնցունել կ'ուզես եղիւ. բայց ինչո՞ւս պէտք. կը ցաւիմ որ ինծի խօսելու կ'ստիպես կոր. ամէն մարդ գիտէ ինչ ըլլալը. աղէկ մարդ է, աղբար. աղէկ. ես կը սիրեմ ան մարդը:

— Շնորհակալ եմ ձեր տուած տեղեկութիւններէն:

— Պապա մարդ է, պապա, անանկ անուշ կերպով կը խարէ որ կը զարմանաս. այսու հանդերձ ինչո՞ւս պէտք... ես ասանկ բանբասանքը չեմ սիրեմ. բայց բանն ասանկ է. ես մարդու վրէժնու հասցնելէ չեմ ախորժիր, գէշ բան է, արդէն զինքը ամէն մարդ կը ճանչնայ. անանկ չէ՞ մի, թերեւս դուն ալ գիտես. աղէկ մարդ է. բայց վերջապէս շատ մի վատահիւր եթէ ընկեր ալ ըլլաս միևակ մի' ձգեր. բայց ընկեր եթէ չըլլաս, աւելի աղէկ կ'ընես, անանկ չէ՞:

— Անանկ է, շնորհակալ եմ:

ԿԱՐԵՒՈՐ ԶԵԿՈՅՑ

Հանրագիտակի Մեծ. Բաժանորդներէ և Գործակալներէ կը խնդրենք որ բաժանորդագիւններէ և յանձնարարութիւններէ մընացած պարտքերնին վճարել բարեհաճին այլևս, որովհետեւ տարւոյն ՈՒԹ ամիսը լրանալէն վերջը՝ դեռ չատ տեղեր սոյնօրինակ հաշիւներ անվճար կը մնան:

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԻ Խմբագրութեան, Բաժանորդագրութեան եւ ո՛ր եւ է գործառնութեան առթիւ հարկ եղած դիմում, գրութիւն կամ նամակ պէտք է ուղղուին միմիայն

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐՍԱՆԻ

որ միակ վարիչն ու պատասխանատուն է թերթին:

ԽՐԱԳՐԱՊԵՏ-ԱՐՏՕՆԱՏԷՐ
ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻՉ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐՍԱՆԻ

Կ. Պոլիս, Պապը Ալի ճատտէսի, Թիւ 38, Մանգուժէի տպարանին կից

ԱՓՕՍԹՕԼԻՔ ԻՆԹԻԹԻԻԹ Ի ԳՕՆԻԱ

(ՃԵՆԱՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ)

Վարժարանս կ'աւանդէ՝ մեր երկրին մէջ գտնուող Ամերիկեան միւս գողէճներուն յար և նման ծրագրով մը՝ Օսմ., Հայ., Անգլ., Ֆրանս., եւ Յուն. (Յունաց Համար) լեզուներ, նաեւ Բնական, Բնապատմական, Ուսողական, Փիլիսոփայական եւն. գիտութիւններ, իսկ իբրեւ արուեստ կ'ուսուցանէ կահագործութիւն, լուսանկարչութիւն և ջութակահարութիւն։ Բաց աստի յառաջիկայ տարեշրջանէն սկսեալ պիտի հաստատէ երեք տարուան

Վանառակացական Դասընթաց

մը՝ ուր մասնաւոր խնամքով պիտի դասախօսուին գործնականապէս Առեւտրական Աշխարհ., Թուար., Տոմարակալութ., Օրէնսգիտութիւն, Վաճառականական և Սեղանաւորական գործողութիւններ, Պաշտօնական և ոչ-պաշտօնական ամէն տեսակ գրութիւններ՝ Օսմ. Հայ., և Ֆրանսերէն լեզուներով, եւն. եւն., եւ սոյն ճիւղին աշակերտները ստիպեալ չպիտի ըլլան գողէճական միւս դասերուն հետեւելու։ Տարակոյս չկայ թէ այս նորութիւնը որ կը պակսէր մեր մէջ՝ մեծ օգուտներ պիտի ընծայէ հասարակութեան։ Գիշերօթիկներու դպրոցական տարեթօշակն է միայն 10 Օսմ. ոսկի, նոր տարեշրջանը պիտի սկսի Սեպտ. 11/24 ին։ Աւելի մանրամասն տեղեկութեան համար դիմել առ Տնօրէնն Վեր. Տըդ. Ա. Յ. Հայկազեան. ի Գոնիա։

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Տ Պ Ա Ր Ա Ն Ը

Փոխադրուած ըլլալով՝

ՊՈԼԻՍ, ՊԵՐՊԵՐ ԱԼԻ ԺԱՏՏԷՍԻ, ԹԻԻ 38. ԻԴՏԱՄ ԼՐԱԴՐԻ ԴԵՄ

Ստացած է տպագրական նոր

կազմակերպութիւններ

եւ կը տպագրէ ամեն տեսակ գիրքեր, մանաւորապէս, հանգիստներ, արհեստականներ, հարսանիքի հրապարակներ, նամակագրութիւններ. այլապէս, եւ տպագրութեան վերաբերեալ ամեն տեսակ պիտի տեսնեն։ — Տպարանին սեփական 2000է աւելի պատկերներ յանախորդաց տրամադրութեան տակ են ձրի։

Անմրցելի մաքրութիւն եւ ճշգրտագործութիւն։

Գաւառներէն ալ կ'ընդունի ամեն տեսակ յանձնարարութիւններ։